

ԹՈՒՐՔԻԱ ՄԵՐԺԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԱԶԱԿՑԻԼ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ



Թուրքիայ մէջ տեղի ունեցած երկրաշարժի պատճառաւ փլատակ շէնք մը

Վանի մէջ տեղի ունեցած երկրաշարժին պատճառաւ, բազմաթիւ երկիրներու շարքին Հայաստան եւս օգնութիւն առաջարկած է թուրքիային, սակայն արժանացած է մերժումի:

«Հակառակ անոր, որ այս դժուար պահուն աշխարհի տարբեր երկիրներ պատրաստակամութիւն յայտնած են օգնութեան ձեռք մեկնելու թուրքիոյ, բայց Անգարան ընդունած է միայն Ատրպէյճանի, Իրանի եւ Փաքիստանի կողմէ ուղարկուած մարդասիրական օգնութիւնը», - կը գրէ թրքական «Հիւրրիյէթ» օրաթերթը, որ փորձած է պարզել այդ կեցուածքին պատճառները:

«Իսրայէլ, ԱՄՆ, Գերմանիա, Յունաստան եւ Լեհաստան առաջինը ցանկութիւն յայտնեցին աջակցութիւն ցուցաբերելու թուրքիային: Նոյնիսկ թուրքիոյ հետ դիւանագիտական յարաբերութիւններ չունեցող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան հեռագիր չդեց Ապտուլլահ Կիլիչին եւ առաջարկեց Հայաստանի օգնութիւնը», - կը գրէ «Հիւրրիյէթ», աւելցնելով որ թուրքիոյ Արտաքին Գործոց նախարարութիւնը չնորհակալութիւն յայտնեց բոլոր առաջարկներուն համար եւ միեւնոյն ժամանակ յայտնեց, որ թուրքիա ներկայ

Շաբ.ք էջ 4



Հայաստանի եւ Ռուսաստանի պատուիրակութիւններու մասնակցութեամբ ընդլայնուած կազմով հանդիպում Փրեմիերի մէջ

Հոկտեմբեր 24-ին, առաջին անգամ ըլլալով պետական այցով Մոսկուա այցելած Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի հետ կայացած միատեղ ասուլիսի ժամանակ, Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւ վերահաստատած է Ռուսաստանի մտադրութիւնը՝ շարունակել աջակցիլ զարբադեան հակամարտութեան կարգաւորման բանակցութիւններուն:

Սերժ Սարգսեանի եւ օրեայ պետական այցի երկրորդ օրը, Քրէմլինի մէջ կայացաւ Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահներու առանձնազրոյցը, որուն յաջորդեց երկու երկիրներու պատուիրակութիւններու մասնակցութեամբ ընդլայնուած կազմով հանդիպումը ու ստորագրուեցան շարք մը փաստաթուղթեր:

Մամուլի ասուլիսի ժամանակ Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւ, մասնաւորապէս, յայտարարեց, - «Ես համոզուած եմ, որ ինդիքի արդար լուծումը հնարաւոր է գտնել բանակցութիւններու միջոցով: Վերջին տարիներուն այս ուղղութեամբ շատ բան կատարուած է նաեւ Ռուսաստանի մասնակցութեամբ»:

Սերժ Սարգսեան նոյնպէս անդրադարձաւ Ղարաբաղի հարցին,

վերահաստատելով Երեւանի պատրաստակամութիւնը՝ հարցը լուծել խաղաղ ճանապարհով:

Ասուլիսի ընթացքին կողմերը անդրադարձան նաեւ երկկողմ տնտեսական համագործակցութեան: Սարգսեան, մասնաւորապէս, ընդգծեց, որ ռուսական ներդրումները Հայաստանի մէջ կը հասնին 3 միլիարդ տոլարի:

«Ռուսաստանը եղել է Հայաստանի համար մնում է թիւ մէկ գործընկերը, առեւտրային եւ տնտեսական գործընկերը», - յայտարարեց Սերժ Սարգսեան:

Ռուսաստանի նախագահը եւս անդրադարձաւ Հայաստանի մէջ ռուսական ներդրումներուն: «Այս տարի երկու երկիրներու միջեւ ապրանքաշրջանառութիւնը պիտի հասնի 1 միլիարդ տոլարի», - յայտնեց Դմիտրի Մեդվեդեւ:

Հայաստանի մէջ գործող արտասահմանեան ընկերութիւններու 60 տոկոսը ռուսաստանեան ընկերութիւններ են: Հայաստանի մէջ ներկայացուած են ռուսական բոլոր խոշոր ընկերութիւնները, սակայն Մոսկուա դեռ չէ որոշած՝ արդեօք Ռուսաստան պիտի մասնակցի Հայաստանի մէջ նոր աթոմակայանի շինարարութեան, թէ ոչ: Այս մասին ասուլիսի ժամանակ ըսաւ Դմիտրի Մեդվեդեւ:

ԵՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԿՃԻՌ ԱՐՁԱԿԵՑ ՅՕԳՈՒՏ ԹԱՆԻՐ ԱՔՉԱՄԻ

Հոկտեմբեր 25-ին, Մարդու Իրաւունքներու Եւրոպական Դատարանը գտաւ որ, թրքական կառավարութիւնը խախտած է փրոֆ. Թանիր Աքչամի ազատ կարծիք յայտնելու իրաւունքը՝ զինք դատապարտելով քրէական օրէնքի թիւ 301 յօդուածի հիման վրայ, Հայկական Յեղասպանութեան մասին հրապարակաւ յայտնած իր տեսակէտներուն համար:

Դատարանը նաեւ եզրակացուց, որ թիւ 301 յօդուածին մէջ կատարուած փոփոխութիւնը եւ «թրքութիւն» բառը «թուրք ազգով» փոխարինելը ոչ մէկ էական ազդեցութիւն ունեցած է, քանի որ թրքական դատարանը շարունակած է նոյն ձեւով մեկնաբանել օրէնքը:

Իր այս որոշումին մէջ Եւրոպական Դատարանը չի շատակած է նաեւ «Ակօս» թերթի խմբագրապետ Հրանդ Տինքի պարագան, երբ ան թիւ 301 յօդուածով հետապնդուել է ետք, 2007-ի Յունուարին Պոլսոյ մէջ սպանուեցաւ թուրք ազգայնականներու կողմէ:

Ողջունելով Դատարանի որոշումը Թանիր Աքչամ յայտարարեց, - «Թուրքիա պէտք է սորվի, որ դիմագրաւել պատմութիւնը ու ընդունիլ անցեալի մարդկային իրաւանց խախտումները ոճիր չէ,



փրոֆ. Թանիր Աքչամ

այլ նախապայցման՝ տարածաշրջանէն ներս խաղաղութեան ու հաշտութեան համար: Ես ինքզինքս կը նկատեմ թուրքիոյ հասարակական կազմակերպութիւններու մէկ մասը, որ կը պայքարի իսկապէս ազատ եւ ժողովրդավար թուրքիոյ համար: Այս չի կրնար տեղի ունենալ, եթէ թուրքիա շարունակէ քրէականացնել Հայկական Յեղասպանութեան շուրջ քննարկումները: Աւելցնելով Աքչամ ըսաւ, - «Չես կրնար Հայաստանի հետ խաղաղութիւն եւ հաշտութիւն իրագործել, նման թունաւոր օրէնքով եւ մերժելով դիւանագիտական յարաբերութիւնները»:

ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՀԵՐՔԷ ՀԻԼԷԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ ԹՈՒՐՔԻՈՅ ՏԱՐԱԾԱԾ ԼՈՒՐԵՐԸ

Վանի մէջ տեղի ունեցած երկրաշարժին հետեւանքով՝ վնասուած է Հայաստանի հիւլէակայանը: Այս մասին կը գրէ թրքական «Չաման» օրաթերթը՝ վկայակոչելով թուրքիոյ ու ժամանակի կազմակերպութեան ստացած տեղեկութիւնը:

Ըստ նոյն կազմակերպութեան, ներկայիս Մեծամորի հիւլէակայանին մէջ աշխատանքներ կը տարուին՝ երկրաշարժի հետեւանքով յառաջացած վնասները վերացնելու համար:

Թրքական կողմը կը պնդէ, որ նոյնիսկ հիւլէակայանին մէջ արտահոսք տեղի ունեցած է, որ, սակայն, վտանգաւոր չափերու չի հասնիր եւ ներկայ պահուն որեւէ սպառնալիք չի ներկայացնել մարդոց եւ շրջակայ միջավայրի համար:

ՀՀ արտակարգ իրավիճակներու նախարարութեան վստահեցուցին, որ երկրաշարժը հիւլէակայանի վրայ որեւէ կերպ չէ ազդած եւ այստեղ աշխատանքը կ'ընթանայ բնականոն հունով:

ԺՈՂՈՎՐԴԻ ՎՃԻՑ ԻՋՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

ՅԱԿՈՐԲԱԴԱԼԵԱՆ

Քաղաքափրի մասը Հայաստանի իշխանական քարոզչության համար հերթական առիթն էր հայ ժողովրդին համոզելու, որ բռնապետին փոխելը ոչ թե ժողովրդավարության հեռանկար է, այլ նոր եւ գուցե աւելի դաժան բռնապետի ձեռքն ընկնելու վտանգ:

Պէտք է արձանագրել, որ այդ մտածողությունը այդուհանդերձ թողնում է ազդեցություն հասարակական շատ շրջանակների վրայ: Ոչ բոլոր քաղաքացիները, բայց նրանց մի զգալի մաս իսկապէս համարում են, որ արաբական աշխարհում սկսուած իշխանափոխություններն ընդամենը նոր բռնապետեր են ծնելու, ոչ թե ժողովրդավարություն:

Բայց, այստեղ մի էական համայնք կա, որն ունի պարզաբանման կարիք, ինչը սակայն իշխանական քարոզչությունը չի անում:

Արեւմուտքի քաղաքական նպատակներով՝ ձերբազատուելով դիկտատորներից, արաբ ժողովուրդը այդուհանդերձ ստանում է իր քաղաքացիական նպատակներն առաջ մղելու հնարաւորութիւն

Չի անում կամ չնկատելու, կամ էլ պարզապէս նկատել, սակայն բացայայտել չցանկանալու պատճառով:

Ի վերջոյ, համահայկական կոնսպիրո-բիոլոգիական հակումները պետք է դնել մի կողմ, եւ համաշխարհային քաղաքական պրոցէսները ենթարկել հնարաւորին սթափ ու սառը դատողութեան: Իհարկէ կասկած չկայ, որ Արեւմուտքն իր աշխարհաքաղաքական եւ աշխարհատեսական շահից ելնելով, արաբական աշխարհում ինչ որ պրոցէսներ է խթանում կամ խրախուսում:

Իհարկէ, Արեւմուտքն այսօր օգնում է գահընկեց անել դիկտատորներին, որոնց հենց ինքն է ծնել, անել, շահել, պահել, անվտանգութեան համակարգերով օժտել, հարստանալու հնարաւորութիւն տուել, կամ այլ կերպ ասած՝ "նստացրել իր գլխին ու ման տուել": Բայց, այդ դիկտատորներն էլ իրենց գլուխն ունէին, որը պետք է լինի ոչ միայն անդի առաջ դէպի ստամոքս տանող ճանապարհի դարպաս, այլ նաեւ մտածելու համար ստեղծուած ուղեղի հանգրուան: Այդ դիկտատորները, որ ունէին սեփական գլուխը, Արեւմուտքի գլխի վրայ նստած ժամանակ թերեւս պետք է այդ գլխով մէկ-մէկ էլ գիտակցէին, որ ինչքան էլ նստած էս Արեւմուտքի գլխին, այդուհանդերձ ցանկալի չէ դրա շնորհիւ նստած մնալ սեփական երկրի եւ ժողովրդի վրին:

Ի վերջոյ, աշխարհն առաջ է գնում եւ մի օր գալիս է սեփական երկրի եւ ժողովրդի վրից իջնելու ժամանակը: Ու թիւր է այն տպաւորությունը, թե այդ ժամանակը բերում է Արեւմուտքը, կամ Արեւելքը, կամ Հիւսիսը, կամ Հարաւը:

Պարզապէս Արեւմուտքը թերեւս առաւել զգայուն է ժամանակի հանդէպ, արեւմտեան քաղաքակրթությունն առաւել ազեկուատ է դարձել ժամանակի պահանջներին

եւ առաւել լաւ է զգում ժամանակն ու պահը, այդ ժամանակի եւ պահի մէջ տեղի ունեցող տեխնոլոգիական եւ հասարակական վերափոխումները: Արեւմուտքը մեղաւոր չէ, որ ունի ժամանակի ազեկուատ եւ առողջ զգացողութիւն, ինչը չափազանց էական է մրցակցային աշխարհում:

Մեղաւոր են նրանք, ովքեր դա չունեն ու մտածում են, թէ կարող են ասենք 8 հազար տարի էլ ապրել նոյն ձեւով: Մինչդեռ այդպէս հնարաւոր է ընդամենը նոյն ձեւով մեռնել 8 հազար անգամ՝ որպէս գործիչ, որպէս պետութիւն, որպէս ազգ, որպէս ժողովուրդ եւ հասարակարգ, որպէս քաղաքակրթութիւն:

Ինչ վերաբերում է ժողովրդավարութեանը, ապա իհարկէ որեւէ մէկը միամիտ չէ ու հասկանում է, որ տեղի ունեցող իրադարձություններում ժողովրդավարութիւնը "ամենայնը" չէ, հետեւաբար կարող

է նաեւ չգալ, երբ ասենք կը լուծուեն քաղաքական այլեւազլ խնդիրները: Բայց, բանն այն է, որ արաբական իրադարձությունները ժողովրդավարութեան հնարաւորութիւն են առաջին հերթին հենց տուեալ երկրների ժողովուրդների համար:

Այստեղ է, որ պաշտօնական քարոզչութեան միտքը կանգ է առնում կամ աչքը փակում է: Արեւմուտքի քաղաքական նպատակներով՝ ձերբազատուելով դիկտատորներից, արաբ ժողովուրդը այդուհանդերձ ստանում է իր քաղաքացիական նպատակներն առաջ մղելու հնարաւորութիւն: Իհարկէ, կարող է առաջ գալ նոր բռնապետութիւն, բայց նաեւ կարող է լինել ժողովրդավարական հասարակութեան կառուցման մեկնարկ. բանը հնարաւորութիւնն է, ու հարցն այն է, թե ինչպէս այդ հնարաւորութիւնը կ'իրացնի բռնապետից ազատուած տուեալ երկրի ժողովուրդը:

Ահա այդ հնարաւորութեան մասին է, որ Հայաստանի իշխանական քարոզչութիւնը գերադասում է լուել, կամ չի տեսնում ընդհանրապէս:

Իսկ իշխանութեան քարոզչութիւնը, մասնաւորապէս Հայաստանում, մէկ այլ մօտեցում է առաջ բերում այդ հողի վրայ, այն, որ ժողովրդավարութեան համար հասարակութիւնը դեռ պետք է հասունանայ, իսկ արաբական հասարակութիւնները դրա համար դեռ չեն հասունացել: Ու պարզ է, որ այդ մտայնութեան լեյտմոտիվն այն է, որ քանի դեռ հասարակութիւնն ինքը չի հասունացել դեմոկրատիայի համար, վտանգաւոր է նրան դեմոկրատիա պարտադրելը:

Նախ, այդ մօտեցումը աւելի շատ չի շեցնում է հասկացողութիւնների նենգափոխում: Բանն այն է, որ ժողովրդավարութիւնը աւելի շատ, կամ առնուազն հաւասարա-

ՇԱԿԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՄԱԿՈՐՈՒԹԻՒՆ

ԱՐԱՄ ԱՐԱՀԱՄԵԱՆ

Հայաստանում սովորաբար ցանկացած (պետական թէ մասնաւոր) գործատուի եւ վարձու աշխատողի շարաբերութիւնները հիմնուած են տիրոջ եւ ծառայի ֆէոդալական սկզբունքի վրայ: Եթէ աշխատողը գալիս է «չեֆի»

տավարձ (մինչդեռ մեր մասնագէտների պահանջներն աւելի համեստ են), կամ էլ ատոմակայանը կոնսերուացւում է՝ շարունակելով իր կարիքների համար ծախսել հսկայական քանակի էլեկտրաէներգիա, բայց ոչ մի կիլովատտ շարտադրել: Բնականաբար, չինովնիկների այդ անբացատրելի

Միջին աշխատավարձը ՀԱԷԿ-ում 215 000 դրամ է Հաշուի առնելով այդ աշխատանքում ենթադրուող պատասխանատուութիւնից առաջացող ստրեսային իրավիճակը եւ առողջութեան ու կեանքի համար վտանգաւորութիւնը՝ դա այնքան էլ ֆանտաստիկ գունար չէ

մօտ եւ փորձում ապացուցել, որ նա արժանի է աւելի բարձր աշխատավարձի, դա խիստ գայրացնում է գործատուին, եւ նրա պատասխանը, որպէս օրէնք, լինում է այսպիսին՝ «դուրդ չի գալիս, թող գնա, ես մի ըրպէս քո պաշտօնի համար տասը հոգի կը գտնեմ»: Եւ շատ տեղերում դա «արդարացուած» մօտեցում է. աշխատաշուկայում առաջարկը գերազանցում է պահանջարկին: Բայց կան դէպքեր, երբ մարդկանց մասնագիտութիւնը իւրաքանչեւ է, եւ այդ բնագաւառներում կադրային պաշարներ չկան: Հայկական ատոմակայանում նման անփոխարինելի մասնագէտները շատ են, ուստի եւ էներգետիկայի նախարարի եւ ՀԱԷԿ-ի տնօրէնի «աւանդական» հայկական մօտեցումը տեղին չէ:

Միջին աշխատավարձը ՀԱԷԿ-ում 215 000 դրամ է: Հաշուի առնելով այդ աշխատանքում ենթադրուող պատասխանատուութիւնից առաջացող ստրեսային իրավիճակը եւ առողջութեան ու կեանքի համար վտանգաւորութիւնը՝ դա այնքան էլ ֆանտաստիկ գունար չէ: Հետեւաբար, ՀԱԷԿ-ի աշխատակիցները հիմքեր ունեն դիմելու եւ պահանջելու աշխատավարձի բարձրացում: Մասնագէտները պնդում են, որ եթէ տնօրէնն ու նախարարը շարունակեն համառել եւ մօտ 150 առանցքային աշխատակիցներ լքեն ատոմակայանը, ապա հնարաւոր էլքերը երկուսն են՝ կամ մասնագէտներ են հրաւիրուում Ռուսաստանից եւ նրանց վճարուում է առնուազն երկու անգամ աւելի բարձր աշխա-

կամակորութեան պատճառով Հայաստանի բնակչութիւնը ստիպուած կը լինի օգտուել հիդրոէլեկտրակայանների արտադրած էլեկտրաէներգիայից, որն էապէս աւելի թանկ է: Էլ չենք ասում, որ մենք այլեւս հնարաւորութիւն չենք ունենայ էլեկտրաէներգիա վաճառել վրաստանին՝ այդպիսով ընկնելով մեր հարեւաններից միակողմանի կախուածութեան մէջ: Ոլորտի պատասխանատուները պէտք է կշռադատեն՝ ի՞նչն է աւելի կարեւոր՝ սեփական սկզբունքայնութիւնը, թէ՛ պետութեան եւ բնակչութեան կրած հսկայական վնասները:

Հաշուարկներն այստեղ այնքան պարզ են, որ մնում է ենթադրել մէկ այլ բան. գուցէ իսկապէ՞ս խնդիր է դրուած փակելու ՀԱԷԿ-ը, եւ այս աշխատանքային կոնֆլիկտը պարզապէս պատրուակ: «ԱՌԱԻՕՏ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁՄԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Մրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
 ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
 ԳԱՔՐԻԷ ՍՈԼՈՅԵԱՆ
 ՍԱՅԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)

Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$80.00 (First Class)
 Canada \$120.00 (Air Mail)
 Overseas \$225.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
 MASSIS WEEKLY

«ԼՐԱԳԻՐ»

ՐԱՅԱՍԱՆ

«ՀԱԿ-Ը ԲԱՆԱԿՑԵԼՈՒ Է ՈՉ ԹԷ ՌԵԺԻՍԻ, ԱՅԼ ԲՈԼՈՐ ՆՐԱՆՑ ՀԵՏ, ՈՎՔԵՐ ՊԱՏՐԱՍ ԵՆ ԴՈՒՐՍ ԳԱԼ ՌԵԺԻՍԻ ԴԵՄ»- ԶՈՒՐԱԲԵԱՆ

Հայ ազգային կոնգրեսը իշխանութիւններին հետ բանակցելու իմաստ չի տեսնում. այսուհետ բանակցելու է ոչ թէ ռեժիմի, այլ բոլոր նրանց հետ, ովքեր պատրաստ են դուրս գալ ռեժիմի դէմ: Նման յայտարարութեամբ հանդէս եկաւ Հայ ազգային կոնգրեսի համակարգող Լեւոն Զուրաբեանն Հոկտեմբեր 25-ին հրաւիրուած ասուլիսում՝ նշելով, որ երբ իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ երկխօսութեամբ է ձեւաւորուում նոր իշխանութիւն, այդ երկրում լինում է ամենակայուն ժողովրդավարութիւնը: Հայաստանում այդ փորձը ձախողուեց. իշխանութիւնները հրաժարուեցին նման սցենարից: Նա տեղեկացրեց, որ ներկայումս որեւէ ուժի հետ բանակցութիւններ չկան. մոբիլիզացիայի բանալին հասարակութիւնն է: Իսկ երբ մոբիլիզացիայի գործը հասնի պատշաճ մակարդակի, հնարաւոր է բանակցութիւն նաեւ քաղաքական ուժերի հետ:

«Աւագակապետութեան կազմաքանդումը կարեւոր գործ է, եւ իշխող քաղաքական ռեժիմի թուլացման ցանկացած քայլ կատարելու ենք: Կոնգրեսը հետեւողական է եւ վճռական ու գնալու է մինչեւ վերջ»,- ասաց Լեւոն Զուրաբեանը, սակայն հրաժարուեց կանխատեսում անել իշխանական կողմից փլուզման մասին: Ըստ նրա՝ պարզ է, որ պետական կառավարման ձախողումը ցոյց է տուել ռեժիմի անընդունակութիւնը յաղթահարել ծառայած մարտահրաւիրները: Հենց ռեժիմի ներսում, Լեւոն Զուրաբեանի դիտարկմամբ, իշխանական ճամբարում կայ կոնֆլիկտ, լարուածութեան առկայութիւն: «Ցանկա-

ցած ուժ, որը հրաժարուած է համագործակցութիւնից կամ այս ռեժիմին սատարումից՝ հասկանալով պետականութեան համար առաջացած վտանգը, սկսում է պայքարել ռեժիմի դէմ, դառնում է ժողովրդի բնական դաշնակիցը»,- ասաց ՀԱԿ համակարգողը:

Նրա խօսքով՝ համագործակցութեան որեւէ պայմանաւորուածութիւն իշխող կողմից չի մասկազմող որեւէ քաղաքական ուժի, այդ թւում «Բարգաւաճ Հայաստան»-ի հետ չկայ: Այդուհանդերձ, կոնգրեսը պատրաստ է համագործակցութեան նոյնիսկ ՀՀԿ-ի այն սեզմներին հետ, որոնք ներսում կը գիտակցեն ռեժիմի վտանգաւորութիւնը եւ դուրս կը գան դրա դէմ:

«Երկրում ստեղծուած է մի իրավիճակ, երբ բոլորը պէտք է հասկանան Սերժ Սարգսեանի ռեժիմի շարունակականութեան վտանգը պետականութեան համար: Մենք չենք ասում՝ միացէ՛ք, աջակցէ՛ք մեզ, ասում ենք՝ երկրում ընթանում է պայքար ռեժիմի եւ ազատաստեղծ ժողովրդի միջեւ. բոլոր նրանք, ովքեր հասկանում են, որ ռեժիմը չարիք է, դառնում են ժողովրդի բնական դաշնակիցները: Մեր նպատակն է քրէպետական օլիգարխիայի կազմաքանդումը, եւ այդ նպատակներն անշեղօրէն իրագործելու ենք»,- ասաց Լեւոն Զուրաբեանը:

Նա վստահեցրեց, որ երբ երկրում կը լինի օրինական իշխանութիւն, օլիգարխները կը գրկուեն արտօնութիւնից՝ հարկային, մաքսային, եւ կը յայտնուեն օրինական դաշնուած, ամէն ինչ կը լինի արդար եւ օրէնքի, Սահմանադրութեան շրջանակներում:

ՀԱՅՐԻԿԵԱՆԸ ՍԱՌԵՑՆՈՒՄ Է ԱԻՄ-Ը ԵՒ ԱԶԱԿՑՈՒՄ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆԻՆ

ԱԻՄ նախագահ Պարոյր Հայրիկեանն յայտարարեց, որ սառեցնում է իր ղեկավարած «Ազգային ինքնորոշում միաւորում» կուսակցութեան գործունէութիւնը, «գրոյից վերականգնում» է Ազգային միացեալ կուսակցութիւնը եւ աջակցում Հայաստանի հանրապետական կուսակցութեանը:

Նա յայտարարեց, որ տրամաբանական է համարում առաջիկայ ընտրութիւններում ՀՀԿ-ին աջակցելու իր որոշումը՝ հաշուի առնելով, որ եւ ՀՀԿ-ն, եւ ԱԻՄ-ը նոյն արմատից են սերում: Նա ընդգծեց, որ աթոռի կամ պաշտօնի որեւէ ակնկալիք չունի:

«Ծրագիրս ներկայացրել եմ Հանրապետականին: Դա մի ծրագիր է, որը Հայաստանը բացառիկ երկիր է դարձնելու աշխարհում: Դա տեսական ծրագիր է»,- ասաց Հայրիկեանը՝ նշելով, որ ՀՀԿ-ից իրեն ասել են, թէ Սերժ Սարգսեանն արդէն ծանօթացել է այդ ծրագրին եւ պէտք է պատասխանի: Ըստ Հայրիկեանի՝ Սերժ Սարգսեանն այժմ «մտորումների մէջ է» այն պատճառով, որ այդ ծրագիրն առաջին անգամ պէտք է կ'իրաւուրի. որեւէ երկրում նման բան չի եղել:

ՌՈՒԲԵՆ ՀԱԽՎԵՐԴԵԱՆԸ ՄՏԱԾՈՒՄ Է ԼՔԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Լրագրողների հետ հանդիպման ժամանակ հարցին՝ երգահան Ռուբեն Հախվերդեանը մտածո՞ւմ է Հայաստանը լքելու մասին, վերջինս պատասխանել է.

- Այո՛, ես մտածում եմ Հայաստանից գնալու մասին: Եթէ ես մնացի, իմ երեխաները վաղն այստեղ ի՞նչ ապագայ են ունենալու: Եթէ մնան այստեղ, իրենք շատ նեղմիտ մարդիկ կը լինեն:

Անդրադառնալով արտագաղթին՝ նա նշեց, որ պէտք է ոչ թէ գնացողներին մեղադրել, այլ դրա պատճառները վերացնել: «Համոզուած եմ՝ ում էլ այնտեղ լաւ բիզնէս եւ լաւ փող առաջարկեն, կը գնայ: Էդ որ արուեստագէտներ կան՝ հետ են գալիս, ուրեմն նրանք այնտեղ ստեղծագործելու ասպարէզ չունեն: Գալիս են, անուրը դնում են հայրենասէր եմ, բայց նշանակում է՝ չեն ընդունուում դրսում»,- եզրակացրեց նա:

Երեւանի մասին երգող Ռուբեն Հախվերդեանը խոր արհեստանքով արձանագրեց, որ մայրաքաղաքում շատ բան է փոխուել, «քաղաքը փոխել է իր դէմքը»:

«Ամէն ինչ այնպէս է փոխուել, որ երգելուց արդէն ուզում եմ ասեմ՝ չէ սա իմ սիրած Երեւանը չէ, սա իմ Հայաստանը չէ»,- նշեց երգահանը:

ՄԱՐԴԱՅԱՄԱՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐԸ ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿՈՒԵՆ 2013-ԻՆ

ՀՀ ազգային վիճակագրական ծառայութեան մարդահամարի եւ ժողովրդագրութեան բաժնի պետ Կարինէ Կոյումճեանը լրագրողներին հետ հանդիպման ժամանակ յայտարարել է, որ մինչեւ Հոկտեմբերի վերջ կ'ամբողջացուի մարդահամարի հարցումների փուլը, եւ յաջորդ տարուայ Փետրուարին կը հրապարակուի՝ որքան մարդու մասին է տեղեկութիւն հաւաքուել:

Ըստ բանախօսի՝ 2012թ. Սեպտեմբեր-Հոկտեմբերին նախնական կը հրապարակուի առկայ եւ մշտական բնակչութեան թիւը, իսկ 2013-ին կը հրապարակուեն ամբողջական տուեալները:

Նա տեղեկացրել է, որ Հոկտեմբերի 12-21-ն ընկած ժամանակահատուածում հաշուառուել են նաեւ յատուկ կարգավիճակում՝ ՔԿՀ-ներում գտնուող, օտարերկրեայ պետութիւններում աշխատող հայաստանցի դիւանագէտները: Հաշուառում իրականացուել է նա-



Կարինէ Կոյումճեան

եւ մանկատներում, ծերանոցներում եւ այլն:

Ինչ վերաբերում է այն հարցին՝ արդեօք կրօնի վերաբերեալ հարցերին պատասխանելը պարտադիր պայմա՞ն էր համարում մարդահամարում, Կ. Կոյումճեանը նշել է, որ ազգութեանը, մայրենի լեզուին եւ կրօնին վերաբերող հարցերին բնակիչները կարող էին չպատասխանել, քանի որ դրանք համապատասխանում են միջազգային մարդահամարի անցկացման չափանիշներին:

«ՀԻԼՏՈՆ» ՑԱՆՑԸ ՄՏԱԴԻՐ Է ԵՐԵՒԱՆՈՒՄ ՀԻՒՐԱՆՈՑ ԿԱՌՈՒՑԵԼ

Երեւանում հիւրանոցային շինարարութեան եւ հիւրանոցային գործի զարգացման անչուող հարցեր են քննարկուել Երեւանի քաղաքապետ Կարէն Կարապետեանի եւ «Ֆիլոքսենոս պոլսկա սպոլկա» լիազօրուած ընկերութեան նախագահ Ռոբերդ Դիլեւսկիի գլխաւորած պատուիրակութեան հետ հանդիպման ժամանակ:

Քաղաքապետարանի մամուլի ծառայութիւնից NEWS.am-ին յայտնում են, որ հիւրերը քաղաքապետին են ներկայացրել աշխարհի տասնեակ երկրներում ներկայացուած «Հիլթոն» հիւրանոցային ցանցի զարգացման ծրագրերն ու մատուցող ծառայութիւնների փաթեթը եւ իրենց հետաքրքրութիւնները յայտնել Երեւանում «Հիլթոն» ապրանքանիշը ներկայացնող միջազգային չափանիշներին համապատասխան հիւրանոցային համալիրի կառուցման հարցում:

Կարեւորելով մայրաքաղաքում



զբօսաշրջութեան զարգացումը՝ քաղաքապետը ողջունել է հանրաճանաչ հիւրանոցային բրենդի հնարաւոր ներկայութիւնը Երեւանում:

«Բարձրորակ ծառայութիւններն ապահովում են զբօսաշրջութեան համար համապատասխան միջավայր: Մենք շահագրգռուած ենք ներդրումային առաջարկով: Վստահ եմ, որ «Հիլթոն» ապրանքանիշը ներկայացուած կը լինի Երեւանում եւ պատրաստ ենք քննարկել փոխաճանաչ գործակցութեան առաջարկները»,-նշել է Կարէն Կարապետեանը:

Ռ. ՅԱԿՈՒԲԵԱՆ, - «ԲՀԿ-Ի ԿՈՍԿԵՑԻՍՏԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼ ԲԱՂԱԲԱԿԱՆ ՈՂՋ ԴԱՇՏԻՆ Է ՁԵՌՆՏՈՒ»

Խորհրդարանական ընդդիմադիր «Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Ռուբեն Յակոբեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում, օրինաչափ համարելով իշխանական դաշտի խմորումները, կարծիք յայտնեց, որ ԲՀԿ-ի կողմից իրացրեց դուրս գալը եւ առանձին մանակցութիւնը ընտրութիւններին քաղաքական ողջ դաշտին է ձեռնադրուել:

«Ես առաջին հերթին նկատի ունեմ այն, որ բազմաբեւեռ ընտրութիւնների ժամանակ ընտրութիւնները համեմատաբար աւելի արդար կը լինեն, այսինքն մրցակցային դաշտը որոշակիօրէն արդարութեան հնարաւորութիւն կը ստեղծի: Միւս կողմից, եթէ այսքան բանից չետոյ ստորագրուի նոր յուշագիր, այսպէս կոչուած լայն, մեծ կողմիցիս ձեւաւորուել համար, ընդդիմութիւնը գերլարումով պարտադրուած է

լինելու ինչ-որ տեղ համախմբուել, այլ կերպ հնարաւոր չի լինի»,- ասաց Յակոբեանը:

«Ինձ համար մի քիչ անհասկանալի է ՀՀԿ-ի կեցուածքը, կամ պահանջը, կամ մեղադրանքը ԲՀԿ-ին, որ իբր՝ եթէ ստորագրել էք յուշագիր, ապա պարտաւոր էք կատարել այդ յուշագրի պահանջները. այլ խօսքով ասած՝ ձեռք էք բերել, պիտի խաղաք», - յաւելեց «Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահը. - «Սա քաղաքական մօտեցում չէ, սա «տղայական» կեցուածք է, ես այդ մօտեցման մէջ շանտաժ եմ տեսնում: Այդ դէպքում ես կարող եմ բնակչութեան կողմից հարցնել ՀՀԿ-ին՝ եթէ ստորագրել էք յուշագիր՝ պարտաւորուելով վերջ տալ կոռուպցիային, բարելաւել ժողովրդի վիճակը, բարեփոխումներ իրականացնել եւ այլն, դուք ինչո՞ւ տէր չէք կանգնում ձեր ստորագրութեանը»:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԱՆԱԽԱԳԱՐՆԵՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՂԱՐԱԲԱՂ



ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահները. ձախեցն աջ՝ Իգոր Պոպով և Ռոբերտ Բրադկեյ, եւ Բեռնար Ֆասիէ

Չորս ամսուայ ընդմիջումից յետոյ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահներ Ռոբերտ Բրադկեյն, Բեռնար Ֆասիէն եւ Իգոր Պոպովը՝ ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջէլ Կասպրշիկի ուղեկցութեամբ, Շաբաթ, Հոկտեմբեր 21-ին այցելեցին Լեռնային Ղարաբաղ:

Ղարաբաղի նախագահ Բակո Սահակեանի եւ արտգործնախարարի պաշտօնակատար Վասիլի Աթաջանեանի հետ մօտ մէկուկէս ժամանոց հանդիպումից յետոյ համանախագահները յայտարարեցին, որ ունեցան արդիւնաւէտ բանակցութիւններ՝ մասնաւորապէս, շփման գծի իրավիճակի շուրջ:

Ամերիկացի համանախագահ Ռոբերտ Բրադկեյն յայտնեց, որ Ղարաբաղի նախագահի հետ եկան մի ընդհանուր համաձայնութեան՝ «որ ցանկացած մաս, ցանկացած կորուստ ուղղակի որեւէ իմաստ չի պարունակում իր մէջ, անիմաստ են այդպիսի կորուստները»: «Եւ մենք եկանք այն համոզման, որ մենք պէտք է անենք ամէն ինչ, որպէսզի ոչ ոք, ոեւէ անմեղ զոհ չլինի», - յաւելեց Բրադկեյն:

Այդ համատեքստում ամերիկացի համանախագահը ընդգծեց Ամերիկացի դիրքորոշումը առ այն, որ Միացեալ Նահանգները նպատակասլաց է դարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման գործում:

«Մենք համոզուած ենք, որ խաղաղ կարգաւորումը չունի այլ ընտրանք», - յայտարարեց Ռոբերտ Բրադկեյն:

Չնայած համանախագահները

պարբերաբար յայտարարում են, որ քայլեր են ձեռնարկում շփման գծում լարուածութեան մեղմացման ուղղութեամբ, սակայն հրադարարի ռեժիմի խախտումները չեն դադարում:

Ռուսաստանցի համանախագահ Իգոր Պոպովը կրկին անգամ յայտարարեց, որ քայլեր են ձեռնարկուած շփման գծում լարուածութիւնը մեղմացնելու ուղղութեամբ:

Պոպովի խօսքերով՝ Բակո Սահակեանի հետ խօսել են, մասնաւորապէս, շփման գծում ուսումնասիրութիւններ կատարելու մեխանիզմների ծրագրի մասին, որ որոշ ժամանակ առաջ յանձնուել է կողմերին, ինչպէս նաեւ խօսել են անցած տարի Ադրբեյջանում Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեյջանի կրօնական առաջնորդների ընդունած համաձայնագրի մասին:

Ռուսաստանցի համանախագահը, յիշեցնելով Նոյեմբերին Հայաստանում կայանալիք ԱՊՀ-ի երկրների միջկրօնական խորհրդի նիստի մասին, յոյս յայտնեց, որ առաջնորդների միջեւ կապի ստեղծման գործընթացը կը շարունակուի:

Տարածաշրջան կատարելիք այցելութիւնից առաջ համանախագահները յայտարարել էին, որ մշակուած է միջոցառումների շարք՝ կողմերի փոխադարձ վստահութեան ուղղութեամբ: Այս առնչութեամբ ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասիէն մանրամասնեց, որ, օրինակ, շփման գծում հրադարարի ռեժիմի ամրապնդմանն ուղղուած ջանքերի մասին է խօսքը:

ԹՈՒՐԲԻԱ ՄԵՐԺԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 1-էն

պահուն օգնութեան կարիք չունի:

«Սակայն այդ բոլորին հակառակ՝ Թուրքիա ընդունեց Ատրպէյճանի, Իրանի եւ Փաքիստանի օգնութիւնը», - կը գրէ «Հիւրերի-չէթ», փորձած է պարզել պատճառները ԱԳ նախարարութեան, ուր թերթի հարցին ի պատասխան ըսած են. «Ատրպէյճան, Իրան ու Փաքիստան օգնութիւն ուղարկած են առանց հարցնելու: Այնպէս որ, մենք չէինք կրնար չ'ընդունիլ արդէն իսկ ուղարկուած օգնութիւնը»:

Միւս կողմէ, Բրիտանական «Տը Թայմզ» հեղինակաւոր թերթը քննադատած է աւերիչ երկրա-

շարժին հետեւանքերը վերացնելու համար միջազգային հանրութեան օգնութիւնը մերժելու՝ պաշտօնական Անգարայի առած որոշումը:

«Ցնցուած տրամաբանութիւն» խորագրով Հրապարակման մէջ պարբերականը կը գրէ, որ Անգարա մերժեց նաեւ Հայաստանի եւ Իսրայէլի՝ այս դժուար պահուն Թուրքիոյ ջանքերը առաջարկը:

Ընդգծելով, որ Թուրքիա այդ մերժումով ուզած է ապացուցել ինքը տարբեր տարի առաջուան համեմատ աւելի վստահ, աւելի բարգաւաճող եւ աւելի ինքնուրոյն երկիր է, բրիտանական պարբերականը կոշտ քննադատութեան են-

ԱԴՐԲԵՅԱՆԸ ԴԱՐՁԱՒ ՄԱԿ-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՉ ՄՇՏԱԿԱՆ ԱՆԴԱՄ

ՄԱԿ-ի անդամ 193 երկրներից 155-ի աջակցութիւնը ստանալով՝ Ադրբեյջանը երկու տարով դարձել է կազմակերպութեան Անվտանգութեան խորհրդի ոչ մշտական անդամ:

Նոյն տեղի համար պայքարում էր նաեւ Սլովենիան, որը անյաջող 16 քուէարկութիւնների արդիւնքում հանել է իր թեկնածութիւնը:

Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիեւը յատուկ յայտարարութեամբ է հանդէս եկել իր երկրի՝ ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի ոչ մշտական անդամ ընտրուելու կապակցութեամբ:

«Մի քանի ժամ առաջ Ադրբեյջանի կեանքում տեղի ունեցաւ նշանակալի եւ պատմական իրադարձութիւն: ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի ընտրութիւններում Ադրբեյջանը ընտրուեց այդ հեղինակաւոր կազմակերպութեան անդամ: Սրտանց շնորհաւորում եմ ադրբեյջանցի ժողովրդին այս մեծ յաղթանակի կապակցութեամբ: Դա չիրաւի մեծ յաղթանակ է», - ադրբեյջանական լրատուական գործակալութիւնների վկայութեամբ՝

յայտարարել է Ալիեւը:

Շնորհակալութիւն յայտնելով Ադրբեյջանի օգտին քուէարկած երկրներին՝ Իլհամ Ալիեւը հաւաստիացրել է, որ ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդում իր երկիրը ծառայելու է «իդէալներին, որոնց նուիրուած է՝ խաղաղութեանը, անվտանգութեանը, ժողովրդավարութեանը եւ արդարութեանը»:

Նա նաեւ համոզմունք է յայտնել, որ աշխարհում աճում է Ադրբեյջանի բարեկամների թիւը:

Հայաստանում Իլխող Հանրապետական կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան անդամ Յովհաննէս Սահակեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում կարծիք յայտնեց, որ Ադրբեյջանի ՄԱԿ-ի անվտանգութեան խորհրդի ոչ մշտական անդամ դառնալու հանգամանքը որեւէ անդրադարձ չի կարող ունենալ դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման ընթացքի վրայ, քանի որ Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգաւորման բանակցութիւններն ընթանում են բոլորովին այլ ձեւաչափի շրջանակում:

ՄԵԿ ԱՄԻՍ ԱՆՑ ԱԼԻԵՎԸ ՈՐՈՇԵՑ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ ԵՐԵՒԱՆԻ ԶՕՐԱՅԱՆԴԵՍԻՆ

Երեւանում կայացած զօրահանդէսը եւս մէկ անգամ ապացուցեց, որ Հայաստանը ոչ թէ անկախ պետութիւն է, այլ՝ ֆորպոստ: Այս մասին, ինչպէս տեղեկացնում ANS Press-ը, կառավարութեան նիստին ասել է Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիեւը:

Չուգահեռներ անցկացնելով ադրբեյջանական եւ հայկական բանակների միջեւ՝ Ալիեւն ասել է, որ այդտեղ համեմատելու որեւէ բան չկայ. «Ադրբեյջանը հզօրանում է, Հայաստանը՝ թուլանում, Ադրբեյջանի բնակչութեան թիւն աճում է, իսկ Հայաստանինը՝ նուազում»:

Ընդգծելով, որ Երեւանում զօրահանդէսի անցկացումը «մեծ սխալ էր», Ադրբեյջանի նախագահն ասել է. «Եթէ մինչեւ հիմա նրանք փորձում էին ինչ-որ մէկին միջերի եւ ֆանտազիաների հաշուին համոզել, թէ հայկական բանակն ամենահզօրն է, ապա նրանց կողմից անցկացուած, այսպէս կոչուած, զօրահանդէսից յետոյ բոլորը հասկացան՝ ինչ տխուր վիճակում է հայկական բանակը: Ես, հաւանաբար եւ դուք, եւ ողջ հանրութիւնն առաջին անգամ տեսանք, որ ռազմական տեխնիկան ընդունակ չէ տեղաշարժուել ինք-

նուրոյն, այն տեղաշարժում էին բեռնատարների եւ քարշակների միջոցով: Կամ այդ տեխնիկան սարքին չէ, կամ այնտեղ վառելիք չկայ, կամ էլ երկուսը միասին: Այս ամէնը եւս մէկ անգամ ապացուցեց, որ Հայաստանը ոչ թէ անկախ պետութիւն է, այլ ֆորպոստ»:

Ալիեւը զարմանք է յայտնել նաեւ զօրահանդէսին հայ հոգեւորականների մասնակցութեան կապակցութեամբ:

«Զօրահանդէսին հոգեւորականների մասնակցութիւնը, մեղմ ասած, զարմանք է առաջացնում: Քահանաները քայլում են որպէս զինուորներ: Դժուար է այդ ամէնը բառերով նկարագրել: Մենք հասկանում ենք, որ Հայաստանը նուաճողական քաղաքականութեան պատճառով բարտուել է ժողովրդագրական լուրջ ինդիքներին: Սակայն մենք պատկերացում անգամ չունէինք, որ այնտեղ զինուորական ծառայութեան են սկսել կանչել նաեւ հոգեւորականներին: Դա, սակայն, ծիծաղելի է եւ ողբերգական: Կարծում եմ՝ նրանք պէտք է հասկանան, որ դարաբաղեան հակամարտութեան կարգաւորումը կը ծառայի իրենց շահերին», - ասել է Ադրբեյջանի նախագահը:

Թարկած է Անգարան:

«Սակայն Թուրքիան դեռ օգնութեան կարիք ունի. նման աղէտներէ ետք ամէն երկիր ալ օգնութեան կարիք կը զգայ: Պէտք է թրքական հպարտութիւնը կառուցել մահացածներու արեամբ, որոնք ողջ կը մնային, եթէ ժամանակին տեղ հասնէր օգնութիւնը: Տարածաշրջանային կայունութիւնը կը

կառուցուի բարեկամութեան եւ ընկերութեան հիման վրայ: Իսկ Թուրքիան շրջապատուած է այդ բարեկամութիւնը առաջարկող երկիրներով: Խիստ քննադատութեան ենթարկելով Թուրքիոյ որոշումը, Բրիտանական «Տը Թայմզ» թերթը կ'եզրակացնէ, - «Այնպէս որ, Թուրքիան պէտք է ընդունի այդ օգնութիւնը»:

massispost.com daily news updates



ՎԱՐՅԱԶՐՈՒՅՑ

«ԵԹԷ ՄԵՆՔ ՆԵՐՍՈՒՄ ՀԶՕՐ ԵՆՔ, ՃՆՇՈՒՄՆԵՐԻՆ ՇԱՏ ՀԱՆԳԻՍ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԴԻՄԱԿԱՅԵԼ»

«Իրատես de facto»-ի հարցերին պատասխանում է «Ժառանգութիւն» խմբակցութեան անդամ ԱՐՄԷՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԸ

-Ինչպէ՞ս էք բնորոշում Հայաստանի ներքաղաքական իրավիճակը:

-Խառը վիճակ, որ ամբողջութեան մէջ ենթադրում է պարզութիւն. երեք նախագահները պատրաստուում են պայքարի, եւ հասարակութիւնն ընտրութեան առաջ է՝ ցանկանում է ապագայում էլ նախկին կառավարման համակարգերը եւ դրանց արդիւնքում ստեղծուած վիճակի շարունակութիւնը տեսնել, թէ՞ այլընտրանքը երեք նախագահներից դուրս է եւ պէտք է առաջ շարժուել ու առաջացած խնդիրների կոյտը լուծել: Այն, ինչ անելու կամ առաջարկելու են երեք նախագահներն ու նրանց սատարող ուժերը, բնականաբար, լուծումների չեն բերելու:

-Ինչո՞ւ էք այդպէս կարծում:

-Որովհետեւ երկու նախագահների ներդրած համակարգերի արդիւնքները տեսնում ենք, իւրաքանչիւր յաջորդը կատարելագործեց նախորդի ժառանգութիւնը՝ հասարակութեան բարոյալքուած վիճակի, տնտեսական խայտառակ յարաբերութիւնների, կառավարման համակարգի զարգացմանը չմիտուած մեխանիզմների ներդրման առումով: Երրորդ նախագահը գրեթէ չորս տարի աշխատում է, եւ դրական փոփոխութիւններ դեռ չկան: Այն, որ նախորդներից աւելի վատը չէ, դեռ չի նշանակում, որ խնդիրը լուծուած է: Այս իրավիճակի հետեւանքն է, որ երբ քաղաքացին լուծում չի տեսնում, յուսալքուած արտագաղթում է: Գումարած այն խնդիրների համախումբը, որ պէտք էր օր առաջ լուծել, բայց լուծելու փոխարէն իմիտացիայի հետեւից են ընկած: Հասարակութիւնը պէտք է ընտրի մինչեւ այժմ եղած գծի եւ այն գծի միջեւ, որը կարող է լինել: «Ժառանգութիւնն» այդ այլընտրանքը ներկայացնող ուժերից մէկն է:

-Երկրորդ ցախագահի մեծ քաղաքականութիւն վերադառնալու շանսերը ռեալ էք համարում:

-Եթէ պայքարն ընթանալ էրկրորդ եւ երրորդ նախագահների միջեւ, երրորդ նախագահի շանսերն աւելի շատ են՝ նա ունի խաղի մեծ դաշտ:

-Երկրորդն էլ փող ունի:

-Երրորդն էլ սնանկ չէ, հաւատարիմ օլիգարխներ ունի, հարազատներ ունի: Նա դաշտ ունի արտաքին աշխարհում՝ Եւրամիութեան, ԱՄՆ, Ռուսաստան եւ այլ երեքի միջեւ կարող է մանելը, նոյնիսկ մաների շանսեր կան ներքաղաքական դաշտում, որի համար յատակ երաշխիքներ պէտք է տա, որ Հայաստանն ընթանալու է բարեփոխումների ճանապարհով:



-Միանշանակ՝ բարեփոխումներ, միանշանակ՝ Մարտի 1-ի իրադրութիւնների բացառապատում, արտաքին յարաբերութիւններում ազգային շահի պաշտպանութիւն: -Ժողովուրդն ինչպէս կ'ընկալի երկրորդ ցախագահի վերադարձը:

-Միայն այդքա՞նը:

-Միանշանակ՝ բարեփոխումներ, միանշանակ՝ Մարտի 1-ի իրադրութիւնների բացառապատում, արտաքին յարաբերութիւններում ազգային շահի պաշտպանութիւն: -Ժողովուրդն ինչպէս կ'ընկալի երկրորդ ցախագահի վերադարձը:

-Իհարկէ, նա քարոզչամիջոցներ ունի եւ կարող է յաջող աշխատանք կատարել այդ ուղղութեամբ, բայց չեմ կարծում, որ հասարակական տրամադրութեան առաւելութիւն ունենայ երրորդի նկատմամբ: Ես համոզուած եմ, որ խնդրի լուծումը ոչ թէ երկու նախագահների հակամարտութեան մէջ է, այլ երեք նախագահներից դուրս: Նրանք առնուազն 20 տարուայ քաղաքական պայքարի, կառավարման փորձ ունեն եւ կարող են իրենց խորհուրդներով մնալ քաղաքական ասպարէզում, բայց որոշումների ընդունման մէջ արդէն չպիտի լինեն, որովհետեւ մենք հասել ենք սահմանագծին:

-Եթէ, իրօք, ճշմարտութիւնը պէտք է որոնել երեք ցախագահներից դուրս, կա՞յ այնպիսի ուժ, որին հասարակութիւնը կ'ընդունի: Նրանց ընտրագանգուածն ազդեցիկ է, կա՞յ ուժ, որ կարող է իշխել երեքի ընտրագանգուածին:

-Հասարակութեան տրամադրութիւնները ստիպում են, որ նման քաղաքական ուժ լինի: Պարտադիր չէ, որ մէկ քաղաքական ուժ լինի, որը 50+1 տոկոս հաւաքի, կարող է լինել դաշինք ընտրութիւններից յետոյ: Հասարակութեան մէջ գերիշխում են բարեփո-

խումների տրամադրութիւնները՝ սկսած իշխանութեան նկատմամբ համակրանք ունեցող նախկին ու ներկայ գանգուածից, որը վճռորոշ մեծամասնութիւն չէ, մինչեւ այսօրուայ ընդդիմութիւնն ու «Ժառանգութիւն» կան այդ քաղաքական ուժերը: Նման ուժ կարող է ծնուել նաեւ հասարակական պատուերի արդիւնքում, ընդամենն անհրաժեշտ է, որ ընտրութիւններն ապահովեն արդարութեան գոնէ նուազագոյն շեմը:

-Չեք ասածք Հայաստանի պարագայում ընդամենը տեսական դիտարկում է. եթէ կարող եմ նման ուժեր ձեւաւորուել, արդէն պիտի լինին, ընտրութիւններին կարծ ընթացք է մտնում նման յայտնութեան համար: Թե՞ ցկատի ուժէք յաջորդ ընտրութիւնները:

-Յաջորդի մասին խօսք լինել չի կարող, որովհետեւ արտագաղթը եւ յուսալքութիւնը վերահաստական միջամտութեան կարիք ունեն, շատ ինտենսիւ պիտի բուժենք այդ հիւանդութիւնը: Ես միայն «Ժառանգութեան» մասին կարող եմ ասել, որ հասարակութիւնը տեսել է, ընկալում է բարեփոխումների մեր ոգին, ժողովրդավարական միտումը, կարծում եմ՝ այլ ուժեր նոյնպէս կը լինեն, եւ հասարակութիւնը նրանց յայտին կարող է հաւանութիւն տալ:

Հաւատացնում եմ, որ այս հարցը ոչ թէ տեսական, այլ գործնական նշանակութիւն ունի: Եթէ իշխանութիւնների նպատակը Հայաստանը կործանելն է, կարող են շարունակել իրենց քաղաքականութիւնն ու իրենք էլ կը մնան փլատակների տակ: Բայց որոշակի խոհեմութիւն նկատուած է, եւ կարծում եմ՝ հասարակական պահանջը կ'ընկալուի: Մարդիկ այլեւ 5000 դրամով ընտրութեան չեն գնայ, որովհետեւ տեսան, որ ապրանքների գներն այնքան են բարձրացել, որ դա ուղղակի անընդունելի է:

-Այսինքն՝ 10000 դրամն է ընդունելի:

-10000 դոլար էլ տան՝ ընդունելի չէ, որովհետեւ ընտրութիւններից մէկ օր յետոյ ապրանքների գներն այնքան են բարձրանում, որ մէկ շաբաթում ամբողջը ծախսուած է, ուրեմն ի՞նչ իմաստ ունի: Միջին ու խոշոր բիզնէսի մէջ էլ արդէն այդ պատկերացումը ձեւաւորուել է, որ տնտեսական դաշտը պէտք է ազատ լինի, կոռուպցիայից զերծ: Վրաստանի օրինակը կողքերիս է: Բոլոր դէպքերում, կարծում եմ՝ իշխանութիւնն այնքան խոհեմութիւն ունի, որ

այս երկրում այլեւ «մարտի 1» չի կարող լինել: Քաղաքական գործընթացները պիտի ունենան բացառապէս քաղաքական լուծումներ, հակառակ պարագայում ընդունելի են ցանկացած ապստամբութիւն ու յեղափոխութիւն, որովհետեւ այլեւ չի կարելի թոյլ տալ չլուծուած խնդիրների կուտակում:

-Հայաստանում սովորաբար համախմբում են անհատների շուրջ, նման անհատ տեսնո՞ւմ էք, որ կարող է համախմբել ոչ միայն ժողովրդին, այլեւ քաղաքական դաշտը:

-Հայաստանում ոչ թէ կոնկրետ մէկ անհատի շուրջ պէտք է համախմբուենք, այլ գաղափարի եւ այդ գաղափարն իրականացնողների: Նախագահական ինստիտուտը, որը մէկ անհատի ինստիտուտ է, կառավարման համակարգում ֆիասկո ապրեց, ժամանակն է այդ մոդէլից հրաժարուելու եւ անցնելու խորհրդարանական կառավարման մոդէլի, որի ժամանակ հաւասարակշռութեան մեխանիզմներն սկսում են աւելի լաւ աշխատել:

-Չեք կարծիքով՝ հնարաւոր է, որ մինչեւ ընտրութիւններ կոալիցիան տրոհուի:

-Հնարաւոր է, իհարկէ: Իսկ փետրուարեան »բարաբր«՝ յուշագրի տեսքով, Պեպանը կորցրել է, Ձիմզիմովն էլ ուրանո՞ւմ է:

-Յուշագիրը Մենուայի սեպագիր արձանագրութիւնը չէ, ցանկացած պահի քաղաքական տրամաբանութեան փոփոխութեան դէպքում կարող է լուծարուել:

-Քաղաքական ո՞ր տրամաբանութիւնն է լուծարում պահանջելու:

-Շահերի բախումը: Քաղաքական ուժերից իւրաքանչիւրն ուզում է աւելի մեծ դերակատարում ունենալ:

-Ուե՞լ են ԲՀԿ-ի խորհրդարանական մեծամասնութեան ձգտումը եւ ձեռքբերումը:

-Ձեռքբերման մասին վաղ է խօսել, բայց ձգտումը բնական է՝ ցանկացած քաղաքական ուժ ձգտում է մեծամասնութիւն լինել խորհրդարանում, երկրորդ կարծիք այս հարցում չկայ:

-Այդ դէպքում անխուսափելի՞ է քաղաքական դաշտի վերադասաւորումը:

-Պարտադիր, շատ արագ կը վերադասաւորուի, սցենարները տարբեր են, ո՞րը կը գործի՝ կ'երեւայ վերադասաւորումների ընթացքում:

-Ուրեմն, ի՞նչ խորհրդարան կ'ունենանք, վերջապէս կը գործի՞

Մար. ք էջ 17

Advertisement for A.B.A. Insurance Services featuring Bedros S. Maronian and Siamanto B. Maronian. Includes contact information, service locations, and a cartoon illustration of a man carrying a large stack of money.

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ՝ ՄԿՐԱՏՈՒԱԾ ԿԵԱՆՔ ՄԸ

Ծ.Խ. Ընդառաջելով ընթերցողներու փափաքին, ամբողջութեամբ կը ներկայացնենք գրականագէտ եւ բանասէր Անահիտ Սուքիասեանի ելոյթը, Պարոյր Սեւակի մահուան 40-ամեակին առթիւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան կազմակերպած երեկոյթին, որու թղթակցութիւնը տուիցք մեր նախորդ թիւով:

Բանախօսութենէ աւելի հոգեկան տուրք մըն է, որ կ'ուզեմ մատուցել Պարոյր Սեւակին, այն մարդուն, որ եղաւ իմ սերունդի պատանութեան հոգիի կնքահայրը եւ երիտասարդութեան չԱստուածը:

Ո՞վ էր այս նորօրեայ հսկան, ինչպէ՞ս եւ ինչո՞վ բացատրել անոր յայտնութիւնը, ստեղծագործութեան նորութիւնն ու համարձակութիւնը՝ թէ իբրեւ խորք, եւ թէ իբրեւ ձեւ:

Հրա՞շք: Բայց վաղուց արդէն արեւելահայ բանաստեղծութիւնը հրաշքներու ծնունդ էր տուած: Չարենցի մահով արեւելահայ բանաստեղծութիւնը կրկին ետդարձ մը կատարած էր դէպի ճառագային-աշուղակաւ ոլորտներ, դէպի բանաստեղծական քարացած մտայնութիւն:

Յետոյ, տարիներ յետոյ միայն Սեւակի ստեղծագործական կեանքի ուսումնասիրութիւնը ցոյց պիտի տայ, որ վաթսուական թուականներուն Սեւակի նորօրինակ եւ զարմանահրաշ ծնունդը արդիւնք էր 15 տարուան պայքարի մը, աւելի ճիշդ, 15 տարուան անօրինակ մաքառումի մը, որմէ յաղթական ելած էր բանաստեղծին եսը, շնորհիւ իր բնատուր տաղանդին, արուեստի դաւանանքին իր անկեղծ ու անկաշառ նուիրումին:

1945 թուական: Նորաւարտ համալսարանական Պարոյրը արդէն բանաստեղծի անուն վաստակած դէմք մըն էր գրական նեղ շրջանակին մէջ: Բայց բանաստեղծի տիտղոսը չէ, որ կը գատորոշէ Աւեակը իր սերնդակիցներէն: Բացառիկ կրթութեամբ միտք, գիտելիքներու անսպառ պաշար, սեփական հայեացք եւ դատում ամէն ինչի մասին. լեզու, արուեստ, պատմութիւն, ազգային ազատագրական շարժումներ, եւրոպական թէ ազգային գրական-նութեան զարգացման հեռանկար:

Երիտասարդ Սեւակ կատակով ինքզինք «Նոր Նարեկացի» կը կոչէր: Հաւատացէք, որ անհիմն եւ սին ինքնամեծարման արտայայտութիւն մը չէ աս: Իր անհաւատալի աշխատասիրութեամբ եւ անյագ հետաքրքրասիրութեամբ Սեւակ հասած էր իմացական այնպիսի խորութեան, որ գումարուելով իր հանձարեղ էութեան, հակայ բաց մը ստեղծած էր բանաստեղծին եւ իր ժամանակակիցներուն միջեւ: Բաց մը, որմէ պիտի շահէր ազգային մշակոյթը, բայց հասկցուելու տուայտանքը պիտի պարզեւէր բանաստեղծի հոգիին:

Պ. Սեւակի կեանքի եւ ստեղծագործութեան առաջին շրջանը կ'աւարտի 1951 թուականին: 1924 թուականի Յունուար 26-ին խոյեցի Ռաֆայէլ Ղազարեանի յարկին տակ ծնած միամօրիկ Պարոյրը գերազանցութեան տիպիւմով արդէն աւարտած էր Երեւանի պետական համալսարանը, 1948-ին հրատարակած էր իր առաջին գիրքը՝ «Անմահները հրամայում են», Գրողներու միութեան անդամ էր, «Գրական թերթի» պոեզիայի բաժնի վարիչ, նոյնիսկ աւարտած էր Մ. Աբեղեանի անուն գրականութեան ինստիտիւտի ասպիրանտուրան եւ գրած աւարտաճառը: (Աւարտաճառը այդպէս ալ պաշտպանութեան շարժանցաւ, «Կարծեցեալ Շապուհ Բագրատունին եւ վաղ վերածննդի



հարցերը Հայաստանում» նիւթը շատ հեռու էր այդ օրերու գաղափարական կաղապարներէն, եւ նորաթուի, բայց արդէն ինքնատիպ ու կաղապարներ փշրող բանաստեղծ-բանասէրը հարկադրուած գոցեց այս էջը եւ բռնեց գորշ սպասումի փէշերէն):

Բայց, ինչպէս ժողովրդական առածը կ'ըսէ՝ շաբաթը ուրբաթէն շուտ եկաւ: 1951 թուական, երեւանեան տոթ ամառ: Գրողներու միութեան տան մէջ պոեզիային նուիրուած խորհրդակցութիւն է: Լեփ-լեցուն դահլիճ, հիւրեր Մոսկուայէն: Քսանթօթամեայ Պարոյրը համարձակութիւն ունեցաւ բարձրաձայնել ճշմարտութիւն մը, որ շատերու համար գաղտնիք էր, սակայն բեմերէն եւ ան ալ ուռու պատուարժան հիւրերու ներկայութեամբ ըստելիք խօսք էր: Պահ մը միամտութիւնը չունենանք կարծելու, թէ Սեւակ ի. Միութեան հիմերը սասանող կոչ մը ըրած էր: Ոչ, քաւ լիցի: Ան պարզապէս քանի մը հայ գրողներ բարձր դասած էր գրչակից ուռու ընկերներէն: Ռուս պաշտօնական հիւրը անբաւական շնջացեր էր. «Մի քանի վայրկեան եւս, եւ այս մարդը ազգայնական է»: Այսքանը բաւարար էր: Սեւակէն օձիք ազատել ուզողներուն սկուտեղի վրայ հրամցուած էր յարմար առիթ մը: Եւ կը հետեւի այնքան ծանօթ պատմութիւնը. աշխատանքէն հեռացում՝ համաձայն իր դիմումի: Բայց երանի այսքանով բաւարարուէին բանասարկուները, այն բանասարկուները, որոնք ճակատագրի ծաղրով նոյնպէս գրչի մարդիկ էին: Եւ մելան կը հոսի, թուղթ կը մրոտի: Այս օրերուն համար ծիծաղելի մեկնաբանութիւններով, բայց այդ օրերուն սարսափելի մեղադրանքներով վկայութիւններ կը գրուին: Որովհետեւ Սեւակ իր բանաստեղծութիւններէն մէկուն մէջ գրած էր, թէ իսողող աշխատանքին մէջ հերոսներ չեն երեւիր, ուրեմն՝ ան պատերազմի կոչ կ'ընէ, իսկ «Քարտէսի առաջ» բանաստեղծութեան անմեղ տողերը՝ պիտի չուզէր ապրիլ հայրենիքէն դուրս, արտասահմանի մէջ, «կը թարգմանուին». ան դէմ է համաշխարհային բանուոր դասակարգին:

Կարելի է դեռ շարունակել, շարունակել ցաւով, ամօթով, դառնութեամբ: Սակայն իմաստ չունի: Պատմութեան այս էջը անդառնալիօրէն փակուած է: Գոցուած են նաեւ այդ պատմութեան մասնակից մարդոց կեանքի էջերը, ոմանց համար անաղմուկ, անշուք,

ուրիշներունը՝ ծնծղաներով եւ յանրաւի պատիւներով: Սեւակինը՝ «մկրատուած, անսպասելի ու առեղծուածային»: Միայն ըսենք, որ այս ամէնը կեանք մը արժեցաւ երիտասարդ Պարոյրին, առողջութիւն, որ դարմանուցաւ երկար տան, հիւանդանոցային ինամքով միայն:

Ուրեմն, սոթակէզ հայաստանեան ամառ, պատրանաթափ ու քարկոծուած երիտասարդ բանաստեղծ, անշնչելի մթնոլորտ: Անհրաժեշտ էր ելք մը գտնել ստեղծուած կացութենէն: Եւ ան գտաւ ելքը. մեկնիլ Մոսկուա եւ ուսանիլ Մաքսիմ Կորքիի անուն ինստիտիւտին մէջ: Անձնական կեանքի երջանկութիւնն ալ ճաք տուած էր, այնպէս որ մեկնումը կրկնակիօրէն արդարացուած էր: Իր ետին կը մնային կինը՝ Մայա Աւագեան, առջինեկ որդին՝ Հրաչուն, ինչպէս կը սիրէր ըսել ինք, եւ գաղտնագերծուած սէրը՝ Շողիկ Սաֆեան:

1951 թուականի աշնան կը սկսի Պարոյր Սեւակի ստեղծագործական կեանքի մոսկովեան շրջանը: Կարեւոր շրջադարձային հանգրուան մը բանաստեղծին համար: Նոր միջավայր, երեւանեան ցնցումներէն հետզհետէ ազատագրուող հոգի, ինքնահաստատման եւ ինքնարտայայտման փնտրտուք, սեփական գեղագիտական ըմբռնումներու յտակացում:

Գրել այն, ինչ կը թելադրէ ներքին ձայնը, ինչ որ հարազատ է գրողական կոչումին, թէ՞ գրել ապապրանքով, ի պահանջել հարկին: Հարց, որ ծառայած էր Սեւակին առջեւ տակաւին 1942-ին: Սեւակ շատ լաւ գիտէր պատասխանը, բայց գիտէր նաեւ, որ անհրաժեշտ էր «ուսեթիլիտացուել», մոռցնել տալ երեւանեան տհաճ օրերու բանադրանքները: Ու նորէն գտաւ ելքը. պէտք էր տպագրուել Մոսկուայի մէջ, այսպէս ըսած՝ անուն շահիլ հոն, եւ այն տան ազգակից գրչակները պիտի չհամարձակէին իր «բուրդը քամուն տալ»:

1953-ին, երկու տարիներու թարգմանական աշխատանքէն յետոյ, Սեւակ ի վերջոյ հրատարակեց իր «Անհաշտ մտերմութիւն» պոէմը: Գրական առումով մեծ բան չարժող գործ, անարժէք՝ իբրեւ որակ, բայց փրկարար՝ իբրեւ յղացում: Գործին առանցքը խորհրդային նոր գիւղի կերտումն է: Այս խղճուկ գրութեան վրայ Սեւակ տքներ է շուրջ եօթ տարի: Համեմատութեան կարգով ըսենք, որ հրաշակերտ «Անլուսի»-ն գրուած է ընդամէնը տասնհինգ ամսուան ընթացքին, երկար դադարներով: Ինչպէս սրամտօրէն նկատած է մեր գրադատներէն մէկը, այս գործին մէջ միայն խորագիրը Սեւակէն մասնիկ մը ունի, իսկ պոէմին տակ իր ստորագրութիւնը կրնայ դնել ունէ գրող: Պոէմի մոսկովեան հրատարակութիւնը բաւական բարդութիւններ յառաջացուց նաեւ Սեւակի անձնական կեանքին մէջ: Թարգմանչուհի Յամիկ Տարօնեանի հետ սիրավէպը քիչ տհաճութիւններ չպատճառեց Սեւակին: Ստիպուած էր Երեւան մեկնիլ, ներկայանալ Գրողներու միութիւն, որ Կենտկոմի թելադրանքով պիտի քննէր երիտասարդ բանաստեղծին բարոյական վարքագիծը: Ճիշդ է, Գրողներու միութեան այդ օրերու քարտուղար Աւետիք Իսահակեան կատակով եւ սրամտօրէն «լուծեց» հարցը, բայց նորէն այս տհաճ քաշքշուքը շատ աւելի խոցելի դարձուց Սեւակի առողջութիւնը: Իսկ հաւատարմով չկայ չարիք առանց

բարիքի ասացուածքին, ըսենք, որ «բարիքը» այն էր, որ Յամիկին միջոցով Պարոյրը ծանօթացաւ վրացուհի, Մոսկուայի մէջ գիտական իր թեզը պաշտպանող Նելլի Մենադարաշվիլիի հետ, որու հետ ալ ապագային ընտանիք կազմեց, ունեցաւ երկու մանչ, ով նաեւ 1971-ին բաժնեց ամուսնոյն ողբերգական ճակատագիրը:

Մոսկովեան մտաւորական շրջանակի գաղափարական բարերար ազդեցութիւնը իր դրական գործը տեսաւ: Պարոյր, հարազատ մնալով գրողական իր կոչումին, շատ լաւ գիտակցելով, որ պիտի բանադրուի եւ «օրէնքից դուրս յայտարարուի», որոշեց դառնալ իր մեծ նախորդի՝ Չարենցի գործին շարունակողը, դառնալ «ժամանակի շունչը» եւ բանաստեղծել «իր նետի հարուածի անհպուածութեամբ»:

Թելուգ եւ ձեռք գրչից էլ գրկեմ, Դու միեւնոյնս, պիտի որ երգես: Թող չտան ոչ մի լիազօրութիւն, Դու մէկ է, սուտը պիտի որ հերքես:

Քեզ կոյր եմ կոչում, Բայց տեսնում ես այն, Ինչ որ շատերը չեն կարող տեսնել:

Քեզ կաղ եմ կարծում, Բայց այնտեղ ես դու, Ուր նրանք երբեք չեն կարող հասնել:

Ահա բանաստեղծի, ծնունդով եւ կոչումով բանաստեղծի հաւատամքը, սրբազան երգումը:

Հոգեկան այս վերագարթնումի արգասիքը կ'ըլլայ «Նորից քեզ հետ» ժողովածուն, որ կը հրատարակուի 1957-ին: Այս արդէն Սեւակն է, իսկական Սեւակը, հասուն, հաստատուն քայլերով, որ սակայն իր ներքին եռեւեփող աշխարհէն փոքրիկ բոց մը միայն լոյս աշխարհ հանած է, իսկ հոգեհոգ տակաւին շիկացումի մէջ է եւ շուտով, շատ շուտով պիտի ժայթքի: Կարծես կռահելով, որ ժողովածուն խորագիրը կրնայ թիւր մեկնաբանութիւններու տեղիք տալ, հեղինակը ինք կը զգուշացնէ, որ այն սիրոյ հետ ոչ մէկ կապ ունի եւ քնարական հերոսը բնաւ ալ աղջկական կերպարանք չունի: Այս շարքին մէջ Սեւակ պարզապէս գտած է իր էութիւնը, որու հետ հանդիպումը կարծես երկրորդ ծնունդ մը պարզեւած է բանաստեղծին, եւ բանաստեղծը հասկցած է, որ՝ «Չուր վատնումն է արդէն յանցանք, աղմկելը՝ ծիծաղելը»:

Ժողովածուն խանդավառ ընդունելութիւն գտաւ Հայաստանի գրողներուն եւ մտաւորականներուն կողմէ: Բայց Հայաստանի գրական մամուլը ոչ մէկ ձեւով անդրադարձաւ «Նորից քեզ հետ» ժողովածուին: Որքան ալ զարմանալի թուի, Մոսկուա բնակող բանաստեղծը շատ ուրախ էր ասոր համար եւ կը գրէր իր մտերիմ բարեկամներէն մէկուն. «Ես բոլորովին չեմ նեղանայ, եթէ ոչ մի գովասանական բան էլ չտպեն իմ մասին: Ի սէր Աստուծոյ, պէտք չէ: Գովասանքի ոչ մի կարիք չկայ»:

Այո, Սեւակ շատ լաւ կը ճանչնար իր գրչակից ընկերները եւ կը նախընտրէր անոնց լուրթիւնը: Ան չէր մոռցած 1951-ի յիշարժան այն օրը, երբ շուրջով ըսուած խօսք մը ձիւնէ գունդի արագութեամբ մեծցաւ, եւ չես գիտեր ինչ հրաշքով Սեւակ բախտակից չդարձաւ Չարենցին:

Չենք կրնար Սեւակը մեղադրել

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ ՌԻԽՏԱԲՈՐՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ Ս. ԿԻՐԱԿՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԵՐԱՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

Ամերիկայի Հայոց Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Խաժակ Արք. Պարսամեան՝ անցեալ շաբաթ խումբ մը ուխտաւորներ առաջնորդեց դէպի Տիգրանակերտ՝ ուր տեղի պիտի ունենար վերանորոգուած Ս. Կիրակոս Եկեղեցւոյ վերածնունդը:

Ուխտաւորներու այս խումբը, որուն մաս կը կազմէր նաեւ Թեմական Պատուիրակ Գերշ. Ս. Վիգէն Արք. Այգազեան, յաջորդ օրը պիտի այցելէր Վան, սակայն Կիրակի օր տեղի ունեցած երկրաշարժին պատճառաւ այս այցելութիւնը ջնջուեցաւ:

Տիգրանակերտի շրջանին մէջ Ս. Կիրակոս Եկեղեցւոյ վերանորոգութիւնն ու վերածնունդը մեծ հետաքրքրութիւն առեղծած էր. գանազան շրջաններէ ներկայ գտնուեցան բարձրաստիճան անձնաւորութիւններ եւ ուխտաւորներ: Տասնըվեցերորդ դարուն կառուցուած Ս. Կիրակոս Եկեղեցին ամբողջ աշխարհի Հայ Եկեղեցիներու մէջ բացառիկ տեղ մը կը գրաւէ: Վերջին տասնամեակներուն եկեղեցին անխնամ եւ քանդուած վիճակի մը մէջ կը գտնուէր, սակայն անոր վերանորոգութեան շնորհիւ, որուն ծախքերուն իրենց մասնակցութիւնը բերին նաեւ արտասահմանի հայերը, Ս. Կիրակոս Եկեղեցին վերաստացաւ իր պատմական դերակերտութիւնը:

Արեւելեան Թեմի ուխտաւորները Իսթանպուլ հասան Ուրբաթ, Հոկտեմբեր 21-ին՝ դիմաւորուելով Կ. Պոլսոյ Աթոռի Պատրիարքական



Աթէշեան, Գերշ. Ս. Խաժակ Արք. Պարսամեան, Գերշ. Ս. Վիգէն Արք. Այգազեան, Գերշ. Ս. Շահան Եպս. Սարգիսեան (Սուրբոյ Առաջնորդ) եւ Գերշ. Ս. Սահակ Եպս. Մաշալեան (Իսթանպուլէն) օծեցին հինգ խորանները: Ներկայ էր նաեւ Կեդրոնական Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ Հոգ. Ս. Հայկազուն Մ. Վրդ. Նաճարեան:

Այս արարողութեան մասնակցեցան աւելի քան 2,000 հոգի, որոնց կարգին ուխտաւորներ Իսթանպուլէն, Միացեալ Նահանգներէն, Հայաստանէն, Հոլանտայէն, Գերմանիայէն, Սուրիայէն եւ Լիբանանէն:

գաբ՝ ձեր տունը եկած կ'ըլլաք: Այսօր ուրախ եւ բացառիկ օր մըն է ոչ միայն ձեզի համար, այլ

ըր»: Քաղաքապետի այս արտայայտութիւնները յաճախ ընդմիջուեցան ծափահարութիւններով. ներկաները իրենց երախտագիտութիւնը յայտնեցին այն հաստատ վկայութեան համար որ այս քաղաքը իրապէս հայկական պատմական կեդրոն մը եղած է:

«Յոյսի օր մը»
Քաղաքապետ Պայտէմիր ճաշկերոյթով մը հիւրասիրեց եկեղեցականներն ու հիւրերը: Ներկայ էին նաեւ Միացեալ Նահանգաց Ընդհանուր Դեսպանը եւ Ատանայի Հիւպատոսը:

Ս. Կիրակոս Եկեղեցւոյ Միական Խորհուրդի ատենապետ Վարդգէս էրկիւն Այիք բարի գալուստ մաղթեց ներկաներուն, իր շնորհակալութիւնը յայտնեց բոլոր անոնց՝ որոնք իրենց նիւթական մասնակցութիւնը բերած էին եկեղեցւոյ վերանորոգման ծախքերուն եւ հրաւիրեց Գրեշ. Ս. Խաժակ Արք. Պարսամեանը իր սրտի խօսքը ըսելու: Սրբազան Հայրը ի մէջ այլոց



բոլորիս համար: Մենք բոլորս գիտենք անցեալի պատահարներուն մասին եւ մեր մաղթանքն է որ մեր զաւակները միասնաբար տունեն յառաջիկայի յաջողութիւններ

ըսաւ. «Այսօրուան իրականացած յաջողութիւնը մեծ նշանակութիւն ունի բոլորիս համար: Միացեալ

Շաբ.ը էջ 19



Ընդհանուր Փոխանորդ Գերշ. Ս. Արամ Արք. Աթէշեանի կողմէ: Նոյն երեկոյեան անոնք ընթրիքի հիւրը եղան Արամ Սրբազանին: Այս ընդունելութեան համար խորին շնորհակալութիւն յայտնեց Գերշ. Ս. Խաժակ Արք. Պարսամեան:

Շաբաթ առաւօտ, ուխտաւորներու խումբը Տիգրանակերտ մեկնեցաւ: Տեղական օդանաւակայանին մէջ դիմաւորուեցաւ Ս. Կիրակոս Եկեղեցւոյ Միական Խորհուրդին կողմէ: Անոնք այցելեցին Տիգրանակերտի Հին Քաղաքը եւ Ս. Սարգիս Եկեղեցին:

Ճամբու ընթացքին կը ծածանէին հայկական, թրքական եւ քրտական ազգային դրօշակները «Բարի եկաք տուն» վերտառութեամբ: Քաղաքին մէջ ուրախութեան եւ ջերմութեան մթնոլորտ կը տիրէր:

Ս. Կիրակոս Եկեղեցւոյ վերածնունդը սկսաւ յետ միջօրէի ժամը 5:00-ին: Գերշ. Ս. Արամ Արք.

Ներկայ էին Իսթանպուլի Միացեալ Նահանգաց Ընդհանուր Հիւպատոս Սքաթ Քիլնըր, Ատանային Միացեալ Նահանգաց Հիւպատոս Տարիէն Տարնէլ, Տիգրանակերտի քաղաքապետ Օսման Պայտէմիր, Սուր Իշի շրջանի քաղաքապետ Ապտուլլա Տէմիրպաս եւ Միացեալ Նահանգաց Ուորվիքի (Ռոտ Այլընտ) քաղաքապետ Սքաթ Աւետիսեան, որոնք հետաքրքրութեամբ հետեւեցան արարողութեանց եւ այս պատմական իրադարձութեան:

Արարողութեան աւարտին՝ Տիգրանակերտի քաղաքապետ Օսման Պայտէմիր նախ Հայերէն, եւ ապա Քրտերէն, Թրքերէն, Անգլերէն եւ Արաբերէն լեզուներով բարի գալուստ մաղթեց այցելուներուն: Հայ ուխտաւորներուն ըսաւ. «Բարի եկաք ձեր տունը: Դուք հիւրեր չէք այստեղ, սաիկա ձեր տունն է: Ամէն անգամ որ հոս կու

Arabian Night
Սրաքսիան Երեկոյ

Կազմակերպութեամբ
ԿԼԵՆՏԵԼԻ
ՍԳՂԿ ԱՐՍԷՆ ԿԻՏՈՒՐ
ՄԱՍՆԱԾԻՊԻՆ

ՇԱԲԱԹ, ՆՈՅՆՄԲԵՐ 5, 2011
Երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ
Հ.Մ.Մ.-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ
1060 N. Allen Ave., Pasadena

ՀԱԾԵԼԻ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ

Մուտքի ցուր՝ Նախապէս ապափովուած \$20 / Մուտքին \$25
Տոմսեր ապափովուու Քամար Քեռամալլու (818) 913-4024

ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆԻ ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՈՒԲԵԼԵԱՆԸ ՀՈԿՏԵՄԲԵՐ 30ԻՆ



Գրիգոր Սաթամեան եւ Ասատուր Կիւզէլեան

Սփիւռ. քահայ իրականութեան մէջ հազուադէպ է, որ անհատ մը 50 տարի անընդհատ ծառայէ հայ թատրոնին: Սա կ'ենթադրէ գերագոյն գոհողութիւն՝ մնալու պատնէշի վրայ եւ շարունակելու պայքարը, թէ՛ հայ լեզուն պահպանելու, եւ թէ՛ թատրոնի սիրով հրահրելու նոր սերունդը, որպէսզի հայ մշակուցութիւնը ջահը վառ մնայ ու յարատեւէ դարէ դար:

Մեր պատմութիւնն ու գրականութիւնը երախտագիտական բազմաթիւ գնահատումներով, մեկնաբանութիւններով, լեզուական, մշակութային, հասարակական եւ գաղափարաքաղաքական վերլուծումներով անդրադարձած են մաշտոցեան գիւտին: Բազմաթիւ սերունդներ՝ հայ եւ օտար մասնագէտներ փորձած են գնահատել անգնահատելին ու դեռ դարերու հոլովոյթին մէջ այդ պիտի շարունակուի, այնքան ատեն որ հայը գոյութիւն ունի, իսկ հայերէնը պիտի յարատեւէ ըլլալ անոր կենդանի լեզուն: Մեծագոյն գնահատականը պիտի որ հայ ժողովուրդին գոյութիւնը նկատուի, քանզի դեռ իր մայրենին հայերէնն է, իր ստեղծագործ մշակոյթն ու գիրն է, իր եզակիութեամբ, ինքնութեամբ եւ անկախութեամբ: Ազգի մը գոյութեան պահպանման գործօնը անպայման գիրը չէ իսկապէս, եթէ ան միայն գրաւոր հաղորդակցութեան միջոցին կը ծառայէ: Հայոց նշանագրերը մեր ազգային նկարագիրն ու հոգին կոփեցին իրենց ֆիզիքական ու հոգեկան արժէքներու ամբողջութեան մէջ: Աստուածային խորունկ ներշնչումով Ս. Մեսրոպ ունեցաւ իր երկունքին մարմին տուող տեսիլը՝ իր ազգի հաւաքականութեան ոսկեձուլ կաղապարը նորաստեղծ մշակոյթի մը քուրային մէջ: Հայոց նշանագրերու գիւտը թարգմանչական արուեստին ճամբով ծնունդ տուաւ հայոց ազգային մշակոյթին: Գիրը չդարձաւ լոկ գրաւոր հաղորդակցութեան միջոց, այլ գոյութեան կանոնադրող ներշնչութիւն: Սահակ Մեսրոպեան այս ոգին էր, որ տոգորուած անպառ կենսունակութեամբ, գինք իր մտքին, սրտին ու արեան կանչին մէջ ապրող ու ապրեցնող ժողովուրդին հետ մաքունեցաւ քաղաքական թէ կրօնական ամէն փոթորկումներուն ու մռայլ ժամանակներուն մէջէն, դառնալով հետզհետէ աւելի նուիրական, աւելի բիւրեղ ու խորհրդաւոր:

Եթէ անդրադառնանք օտար հեղինակներու Ս. Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի գործունէութեան վերաբերեալ գնահատականներուն, այստեղ պիտի բաւարարուինք ընդամէնը նշելու գերմանացի հայագէտ Մարկուարտի այն համեմատութիւնը, որ կ'ընէ իր իսկ ազգի լուսաւորիչներ՝ Պեպինի ու Վինֆրիդի գերման ժողովուրդին տուած ժառանգութեան հետ.

«Եթէ այս գործին հետ համեմատենք դանայեան այն պարզեւը գոր Պեպինոս Փրանկ, քաղաքական ու եկեղեցական ամէն միջոց լիապէս ի ձեռին ունենալով՝ նուիրեց գերման ժողովուրդին, այն ատեն թէ՛ Պեպինոս եւ թէ՛ իւր գիտակիրը՝ Վինֆրիդ, խեղճ թզուկներ կ'երեւան համեմատութեամբ մտքի այն հսկաներու: Ժողովուրդ մը, որ իր ծոցէն այնպիսի մարդիկ ծնած է եւ զանոնք իբրեւ իր գիւցագնները կը յարգէ, որչափ թէ անոնց օրինակին հետեւի, անկարելի է որ ի սպառ ջնջուի՝ որչափ ալ թուրք, քուրդ, թաթար, պարսիկ, ու բոլոր մեծ պետութիւնները հակառակ ըլլան անոր»:

Միանշանակ է, որ Հայոց Ոսկեդարը արգասիքն էր խմբային արարչագործ աշխատանքի հաւա-

քական գիտակցութեան, ազգային մէկ նպատակ իրականացնելու ուղղութեամբ կատարուած անձնուէր գոհողութիւններու, հաւատաւոր ու անխոնջ տքնութիւններու: Սոյն իրականացումին սրբազան նախաձեռնողները հանդիսացան Ս. Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթեւ եւ Վոսապուհ թագաւոր, իրենց գործակիցներ ունենալով թարգմանչաց վարդապետներու լուսաւաճանչ փաղանգը:

ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՇԱՐԺՈՒՄԸ

Իսկութեան մէջ, թարգմանչաց Շարժման սկիզբը կը համարուի Ե. դարու առաջին կէսը՝ ներշնչուած հայոց նշանագրերու գիւտով եւ Աստուածաշունչ մատեանի հայերէն թարգմանութեամբ, Ս. Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւ կաթողիկոսի գլխաւորած, անոնց անմիջական աշակերտներու, ապա աշակերտաց աշակերտներու՝ աւագ եւ կրտսեր խումբերու իրագործած թարգմանչական, մեկնողական, նաեւ ինքնագիր ստեղծագործութիւններու արդիւնաւորութեամբ երեւցած իրադարձութիւնը, որ տեւեց մինչեւ Է. դար: Հետագայ քրական է սակայն, որ Հայ Եկեղեցին թարգմանչաց դասուն մէջ ընդգրկած է նաեւ հետագայ դարերու արդիւնական հեղինակներու անուններ՝ մինչեւ ԺԲ. դար: Ի տարբերութիւն զանազան ուսումնասիրութիւններու, յատկանշական է ականաւոր բանասէր Թէոդիկի այս կապակցութեամբ հրատարակած ցանկը իր «Ամէնուն Տարեցոյց»ին մէջ, Փարիզ, 1928 թուականին: Ստորեւ հայ մշակոյթի այդ երախտաւորներուն անուանացանկը.

- Ե. դար.-
- Սահակ Պարթեւ, Մեսրոպ Մաշտոց, Կորիւն, Եզնիկ Կողբացի, Ղազար Փարպեցի, Մովսէս Խորենացի, Եղիշէ Ամատունի, Ղեւոնդ Երէց Վանանդեցի, Դաւիթ Անյաղթ, Մամբրէ Վերծանող, Գիւտ Ոթմսեցի, Յովհան Մանդակունի, Աղան, Տիրայր, Դանան, Վահրիճ, Բաբգէն եւ Կոմիտաս
- Զ. դար.-
- Պետրոս Սիւնեցի
- Է. դար.-
- Յովհան Մամիկոնեան, Սեբէոս Բագրատունի, Մովսէս Կաղանկատուացի, Թէոդորոս Քոթենաւոր
- Ը. դար.-
- Յովհան Օձնեցի
- Թ. դար.-
- Յովհաննէս Դրասխանակերտցի, Թովմա Արծրունի
- Ժ. դար.-
- Գրիգոր Նարեկացի, Ստեփանոս Ասողիկ, Ուխտանէս Սեբաստացի, Խոսրով Անձեւացի
- ԺԱ. դար.-
- Գրիգոր Մագիստրոս, Արիստակէս Լաստիվերտացի
- ԺԲ. դար.-
- Ներսէս Շնորհալի, Ներսէս Լամբրոնացի, Յովհաննէս Սարկաւագ, Մատթէոս Ուռհայեցի:

Ուշագրաւ է որ, Ե.-ԺԲ. դար, Սրբոց թարգմանչաց փաղանգին մէջ ընդգրկուած են 36 լուսապսակ անուններ: Սոյնը, մեծ հաւանակաւորութեամբ, գիտաւորեալ պատշաճեցում մը եղած ըլլալու է Ս. Մեսրոպ Մաշտոցի ստեղծագործած հայոց նշանագրերու 36 թիւին:

Մեսրոպ Մաշտոց իր մահկանայնութիւնը

Շարք էջ 15

ԱՆՐԵԻ ԾԻԾԱՂ

Գ. Բ. Ը. Մ. ԱՄՏԱԿԱՅԻ ԹԱՍԵՐԱՆՈՒՄ

Կրտսէրներու 2 արարով

Հեղինակ **ԵՐՈՒՄԵՆ ԵՍԵԱՆ**
Թեմադրիչ **ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ**

Շաբաթ, Նոյեմբեր 5, 19, 26
ժամը 8:00-ին

Կիրակի, Նոյեմբեր 6, 13, 20, 27
ժամը 5:00-ին

Շաբաթ, Դեկտեմբեր 3, 10
ժամը 8:00-ին

Կիրակի, Դեկտեմբեր 4, 11
ժամը 5:00-ին

Մուտքի և տիք՝ \$20

ԳԵՐԱՎԱՍՏՐՆԵՐ՝
ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ, ԱԼԵՍ ԽՈՐԾԻՏԵԱՆ, ՈՈՒԲԵ ՀԱՐԱՆՏԱՅԵԱՆ,
ԱՐԻ ԼՊԱՐԻՏԵԱՆ, ԱՐՓԻ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ, ՆԱՐԻԵ ՄԱԳԵԱՆ, ԱՐՓԻ ՊԱԼԱՊԱՆԵԱՆ,
ԱՐԱՍ ՄՈՒՐԱԳՅԱՆ, ՎԱԳՕ ՆԱԶԱՐ, ԳՐԻԳՈՐ ՄԻՓՈՆԵԱՆ, ԹԱԼԻ ԳԱԼԱՄԱՐԵԱՆ,
ԱԼԻ ԽԱՆՏԵԱՆ, ՈՍԲԵՆ ԲԱՐՍԵՂԵԱՆ, ՆԱՅԻՐԻ ԽՈՐԾԵԱՆ,
ԱԼԻ ՊԱՐՈՆԵԱՆ, ԱՍՏԳԻԿ ՍԻՆԱՆԵԱՆ

Գ. Բ. Ը. Մ. ՓԱՍՏԻՆԱՅԻ ԿԵՂՈՒՆԻ ՄԷՉ
2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104

Տոմարու համար դիմել Գ. Բ. Միտքեան Գրասենյակը
(626) 794-7942 կամ (626) 710-3805
itsmyseat.com
www.agbuca.org

ՀԱՒԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Շարունակում է 14-էն

նացուն կը կնքէ 440 թուականին, ու կը թաղուի Երեւանէն ոչ հեռու Օշական գիւղը: Իր մահունէն 3 տարի անց, հայոց հազարապետ Վահան Ամատունի եւ զօրավար Հմայեակ Մամիկոնեան, ի պատիւ եւ յիշատակ Մաշտոցի, իր գերզման-դամբարանին վրայ կը կառուցեն եկեղեցի մը, որ աւանդաբար դարձած է հայութեան կարեւորագոյն ուխտավայրերէն մէկը:

ԿԱՐԵՒՈՐ ԲԱՅԹՈՂՈՒՄ ՄԸ

Վերը տարբեր առիթներով անդրադարձանք, որ հայոց գիրերու գիւտը եւ թարգմանչաց ամբողջ Շարժումը հիմնական նախաձեռնողն էր Ս. Մեսրոպ Մաշտոց, իրեն անմիջական համարոհներ եւ սատարողներ ունենալով Վառձապուհ թագաւորն ու Ս. Սահակ Պարթեւ Հայրապետը: Հոս ամենեւին պէտք է անտեսել լուսաւոր դէմքը Վառձապուհ թագաւորին: Եթէ Սահակ Պարթեւ օրհնողն եղաւ Ս. Մեսրոպի առաքելութեան, իսկ գիրերու գիւտէն ետք, իր փայլուն հելլենագիտութեամբ ղեկավարողը Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան, պիտի ենթադրենք կամ նոյնիսկ համոզուած պիտի ըլլանք ըսելու, որ արքան Վառձապուհ չզլացաւ բանալու արքունի գանձարանը՝ նիւթապէս օժանդակելու համար Ս. Մեսրոպի ազգօգուտ գործունէութեան, Ասորիքի մէջ անոր կեցութեան շրջանին ու հետագային:

Մեր պատմութեան այս մռայլ ժամանակահատուածին մէջ իսրայէլական կարծատեւ շրջանի մը անպահովումը, որու ընթացքին իրականացաւ հայոց նշանագրերու գիւտն ու արդիւնաւորութեամբ թարգմանչաց Շարժումը, Վառձապուհ թագաւորի ճկուն քաղաքականութեան կը պարտինք: Առանց այս իսրայէլական, նիւթական օժանդակութեան եւ պետական հովանաւորութիւններուն, թերեւս դժուար պիտի ըլլար պատկերացնել արդիւնաշատ գործը Ս. Մեսրոպի եւ յաջողութիւնը թարգմանչաց ձեռնարկին:

Արդարեւ, այսօր անհասկնալի եւ անբացատրելի կը մնայ այն բացթողումը, (եթէ կարելի է ըսել), թէ ինչո՞ւ համար Հայ Եկեղեցին Ս. Մեսրոպի եւ Սահակ Պարթեւի կողքին չէ սրբացուցած նոյնքան նուիրական անուն մը՝ որպիսին է Հայոց Վառձապուհ Արշակունի թագաւորը:

Հակուած ենք դիտելու այլ եկեղեցիներու կանոնականացուցած սրբոց դասը, ուր այնքան յաճախ կը հանդիպինք թագաւորներու եւ իշխաններու անուններուն, որոնք շատ աւելի նուազ ծառայութիւններու կամ հաւատքի վկայութիւններու առթիւ, տուեալ եկեղեցիներուն կողմէ, տարբեր դարերուն մէջ, սուրբ հռչակուած են: Դեռ ի՞նչ պէտք է ընէր մեր քրիստոնեայ եւ հաւատաւոր թագաւորը Վառձապուհ, մեր եկեղեցական տօնացոյցին մէջ համապատասխան գնահատականով մը յարգուելու համար:

ՀԱՅ ՍՓԻՒՌՔՆԻ ՈՒ ՆԵՐԿԱՅ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Այնչափ կարեւոր այս նիւթին ստիպուած պիտի ըլլանք անդրադառնալ շատ հպանցիկ ակնարկով մը: Խօսքը ամենեւին չի վերաբերիր Հայաստանի իրականութեան, ո՛չ արեւելահայերէնին, ո՛չ ալ հոն

որդեգրուած ուղղագրութեան: Սա պահուած մեր խորհրդածութիւններէն դուրս կը մնայ այդ անդրադարձը. ուրի՛շ առիթով: Հարցը սփիւռքահայութիւնն է եւ ընդհանրապէս արեւմտահայերէնի արդի նահանջը: Այս առնչութեամբ պիտի նախընտրէինք խօսքը տալ Շահան Շահնուրին, քաղուած մը ընելով իր «Նահանջը Առանց Երգի» երկէն.

«Ինչ պէտք է, ինչ պէտք է սակայն ըսել այս բոլորը որ արդէն իսկ այնքան անգամներ կրկնուած ըլլալու տեղումներուն: Ինչ պէտք է մանաւանդ գրադիւ պարագաներով, որոնց լաւագոյն դարձանք բառերուն եւ ոյժը չի կրնար կազմել բնաւ: Այո՛, տիպարը պատահական չէ, միայն ժամանակի մը ծնունդ չէ. սակայն մինչդեռ անցեալի մէջ կարելի էր մասամբ գինք անտեսել, իր վատառողջ մեղկացումը չէ գործացնել, թողով որ ազգին թիւը բազմապատկելու իր միակ դերը կատարէ, հիմա անկարելի կը դառնայ իրեն հանդէպ անտարբեր մնալ: Ոչ թէ որովհետեւ այժմ պատերազմ կայ ու կռիւ, ոչ թէ որովհետեւ այժմ ճակատամարտ կայ ու կենսապայքար, այլ որովհետեւ կայ բան մը աւելի ճակատագրական, աւելի աններող, կայ բան մը անհեղ, անդիմադրելի որ իր անունը կ'ոռնայ բոլոր քառուղիներէն. նահանջն է ան: Նահանջը, նահանջը հայերուն: Կռիւը սրբազան բան է, ճակատամարտը երբեմն նոյնիսկ օգտակար. անոնցմէ ազգ մը դուրս կու գայ պարտուած կամ յաղթական, սակայն երկու պարագային ալ դուրս կու գայ: Բայց նահանջը հոգիներու, վրիսի պտոյտ տուող գառիթափին իրայ այս ու նահանջը կը ջնջէ, կը ձուլէ, կ'անհետացնէ ամէն բան: Իրա՛ւ, բազմաթիւ չեն այսպիսի զարգացած անտարբերներ, սակայն անդին կան ամբոխները անտաշ, անմիտ եւ ուժացած մարդոց, որոնք կարծես բնագոյրաբար, կարծես արիւնով ու ծովով ճիշդ նման են նախորդին: Անոր պէս առաջինը կ'ըլլան ընկրկող, մոռցող, ուրացող: Եւ կը կազմուի անհեղ զանգուածը անոնց, որոնք կը նահանջեն ու այդ մեծ հոսանքին մէջ կը քշեն կը տանին միւսներն ալ, զանցառ բացառութիւններն ալ:

Կը նահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսայ. կը նահանջեն բարք, ըմբռնում, բարոյական, սէր: Կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լե-

զուն, կը նահանջէ լեզուն: Եւ մենք դեռ կը նահանջենք բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ. մեղա՛յ, մեղա՛յ Արարատին:

Եղան հայեր, որոնք իրենց մորթը փրկելու համար վճարեցին ոսկի. եղան ուրիշներ, որոնք տուին հաւատք, կուտութիւն, եղան անունք, որոնք լքեցին տուն, տեղ, երկիրք. եղան դեռ վատեր՝ որ ուրացան ազգ եւ լեզու, եւ հերոսներ՝ որ տուին արիւն, կեանք, օր ու արեւ: Իսկ մենք՝ կը վճարենք իբրեւ փրկագին այն, որ պիտի գայ: Իբրեւ վերջին փրկագին՝ մանուկներ, որոնք կրնային մեծնալ, ապագայի սերունդներ՝ որոնք մեզմէ վերջ պիտի գային: Որովհետեւ այն որ պիտի գայ, պիտի ըլլայ օտար, բանիւ եւ գործով, կամաւ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, մեղա՛յ, մեղա՛յ Արարատին»:

ԼԱՒԱՏԵՍՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՈՎ

Նոր կտակարանի վերջին՝ Յայտնութեան գրքի դատաստանական սարսափազու պատկերներով կամ յոռետեսութեամբ պիտի չուզէինք աւարտել թարգմանչաց տօնին եւ մշակոյթի ամսուն ձօնուած մեր քանի մը ամփոփ խորհրդածութիւնները: Ինչքան ալ իրատեսութեան հիմք ըլլայ ընդունելու սփիւռքահայ կեանքին մէջ իրականացող նահանջը, այդուամենայնիւ պէտք է հաւատալ մաշտոցեան ոգիի յաղթանակին: Պէտք է ամբօրէն հաւատալ հայ դպրոցի առաքելութեան կարեւորութեան Սփիւռքի բոլոր տարածքներուն: Հոն ուր ընկրկած էր հայութեան քաղաքական ոյժը եւ ոչ մէկ հեռանկար կար ապագայի գորշութեան մէջ թէկուզ լոյսի աղօտ նշմար մը տեսնելու, մաշտոցեան ոգին զօրակոչի ենթարկեց ազգը՝ ինքնուրոյն մշակոյթ ստեղծելու եւ յաղթական գոյապայքար մը մղելու գալարուող դարերու ամենի մրրիկներուն դէմ: Մժղուկներու նման պէտք է թառիլ ուրիշ մարմիններու վրայ եւ սեփական կենսապայքարը ապահովել փորձել ուրիշին ծծած արիւնով: Սփիւռքը պէտք է իր աւիւնը գտնէ իր ներսիդիին՝ բարեկարգելով եւ վե-

րակազմելով իր ազգային-հասարակական կեանքի բոլոր կառուցները: Ան իր նիւթական եւ բարոյական ներուժը պէտք է վատնէ գայն բաշխելով ուրիշներուն, պէտք է ինքզինք տարհամոզէ այն սխալ տեսութեամբ, թէ իր ճակատագիրը ձուլուելու օրհասականով է կնքուած: Զարգացած ազգի մը քաղաքակրթութիւնը կարելի է դուրսէն կործանել, եթէ ան նախապէս ներսէն չքայքայուի: Եթէ ժողովուրդ մը չհաշտուի մեռնելու ինքնակործան գաղափարին հետ, կարելի է գայն մեռցնել: Յեղասպանութիւն տեսած, մահուան բովէն ու Տէր Զօրի անապատներէն վերապրելով Սփիւռք կերտած ժողովուրդ մը չի՛ կրնար մեռնիլ, չի՛ կրնար անհետիլ, եթէ ան իր գիտակցութեան ու հոգիին մէջ չփոշիացնէ կամքը յարատեւելու, միշտ առաջնահերթութիւնը տալով բարեկարգելու նախ իր սեփական տունը: Հեռեւաբար, պէտք է առաւել եւս կռել-կոփել Սփիւռքի ինքնութիւնը՝ հզօր հայութիւն մը պահելու համոզումով:

Թարգմանչական արուեստով, մշակոյթին ճամբով հայը Ե. դարուն երկնեց ամբողջ ոսկեղար մը, իր ինքնութեամբ ազգերու ընտանիքին մէջ գոյատեւելու իր ուրոյն դիմագիծով եւ գաղափարախօսութեամբ: Այսօր ամէն հնարաւորութիւններն ու միջոցները ունինք պահելու եւ առաւել եւս զարգացնելու Սփիւռքի բոլոր տարածքներուն մեր սեփական տունը, եկեղեցին, դպրոցն ու ազգային, մշակութային ու քաղաքական կառուցները. յումպիտս չապառենք հայ կեանքին մեր պաշարը, եւ ընդհակառակը՝ մնանք կապուած մեր արմատներուն, մեր ինքնութեան՝ լաւատեսութեան ամէն իրաւունքով:

Նշուած երեք տօներն ալ շարժական են եւ հիմնուած չեն անշարժ թուականներու վրայ:

2 Հմմտ. Կորին, Վարք Մաշտոցի, Երեւան, 1941, էջ 40:

3 Հմմտ. Ղազար Փարպեցու Պատմութիւն Հայոց, Թուղթ Առ Վահան Մամիկոնեան, Երեւան, 1982, էջ 30:

4 Տե՛ս, Յ. Մարկուարտ, Պատմութիւն Հայերէն Նշանագրերու Եւ Վարուց Ս. Մաշտոցի, Վիեննա, 1913, էջ 8:

www.massisweekly.com updated every Friday

<p>ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒՄ</p>	<p>ST. GREGORY ARMENIAN CHURCH Geragos BANQUET HALL OF PASADENA</p>	<p>NEWLY REMODELED</p>
	<p>Now ready to host your</p> <ul style="list-style-type: none"> • Wedding • Baptism • Anniversaries • All other happy & sad events. • Գարսանիք • Մկրտութիւն • Տարեդարձ • և ամէն ուրախ ու տխուր առիթներ: 	
<p>ԿԱՌԵ 562-715-8730 VAHE</p> <p>Լաւագոյն և յարմարագոյն գիւտերով ձեզ կ'սպասարկենք</p>		

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՏՕՆ

ՊՕՂՈՍԼԱԳԻՍԵԱՆ

Հայոց Առաքելական Եկեղեցին, «Եկեղեցու Հայրերի» շարքին է դասել հոգևոր, մշակութային, լուսաւորութեան գործի նուիրեալներ՝ Թարգմանչաց գործիչներին: Տարին երկու անգամ տօնուում է նրանց լուսաւոր, փառայն չիշատակը: Յունիսի վերջին, Յուլիսի սկիզբներին, Օշականում, տօնախմբուում է Սահակ Պարթեւ ու Մեսրոպ Մաշտոցի տօնը, իսկ Հոկտեմբերի սկիզբներին Մեսրոպ Մաշտոցի ու նրա դաստիարակաց աշակերտներ, ի «Թարգմանիչ» ներքին տօնը:

Հայոց աշխարհում մարել էր յուշը իրենց Նայիրեան աշխարհի Արմինա-Ուրարտուի Իշպիունի-Անուշաւան արքայի հայացրած սեպագիր գրերը, նրանով քարերին դրոշմուած իրենց արքաների պատմաները: Ո՞վ էր սպանել, ո՞ւր էին նաեւ հայոց աստուածների դպիր, արուեստների, բանաստեղծութեան, իմաստութեան՝ Տիր աստուծոյ գրերը: Ասացէ՛ք, դպիրը առանց գրերի եղած կը լինի՞: Գրաբար հայերէնի բանաւոր խօսքն էր հայոց աշխարհում: Դպրոցներում ուսուցանում էին յունարէն, ասորերէն, պարսկերէն: Հայաստանը դրժելով իր հին աստուածների տիեզերական իմաստութիւնը, հեռու վարդապետի հաւատն էր ընդունել: Քրիստոնէութիւնը հայոց աշխարհ էր թափանցել յունարէնով, ասորերէնով: Եկեղեցու ծէսերը կատարուում էին ժողովրդային անհասկանալի այդ լեզուներով: Եկեղեցական գրքերը, աշխարհիկ գրականութիւնը, դպրոցներում ուսուցումը յունարէն էին:

Գրիգոր Լուսաւորչի թոռ՝ Սահակ Պարթեւ կաթողիկոս, իր շուրջը հաւաքելով Մեսրոպ Մաշտոցին ու երկրի մտաւորականներին, նպատակադրուել էր հայոց երկիրը ազատել յունական ու ասորական ազդեցութիւններից: «Օշականից հասած մտքի աստուած Մեսրոպը», «Վահագն Համաստեղութիւնից» 36 արեւներ էր վար բերել, նրանց լոյսից նշանագրեր արարել, իրենց արիական ցեղի իմաստուն հանճարից ժայթքած նրբագոյն հնչիւններն էր բաշխել նրանց, որոնք Արմէն-Հայ արիական ցեղին տանում են յաւերժութիւն: Սահակ Պարթեւ, Մեսրոպ Մաշտոց, Կորիւն, Եզնիկ, Ղեւոնդ, Յովսէփ երեսուն տարիների տքնանքով յունարէնից թարգմանեցին, հայացրին, Քրիստոնէութեան Մատենան՝ Աստուածաշունչը, որ եւրոպական գիտնականների կողմից համարուեց «Թագուհի Թարգմանութեան»:

Մեսրոպի դաստիարակաց, ուսուցանած աշակերտները վերադառնալով յունական, ասորական մշակոյթի ուսումնական կեդրոններից, գրական, գեղարուեստական, գիտական, պատմական բազում երկրի թարգմանութիւններ կատարեցին, «Թարգմանիչներ» անուանեցին նրանց, սրբացրին նրանց: Թարգմանութիւնը գրական ստեղծագործութիւն է, որ մի երկրի վերատեղծում է այլ լեզուով: Թարգմանիչներ՝ Կորիւն, Եղիշէ, Յովսէփ, Յովնան, Ղեւոնդ, Եզնիկ, Դաւիթ Անյաղթ, Մովսէս Խորենացի, Ղազար Փարպեցի, թարգմանեցին, հայացրին յունական, ասորական բազում երկեր, որոնց մի մասը անհետացած լինելով, հանդէս են գալիս

որպէս բնօրինակներ: Ոչ միայն թարգմանեցին ուրիշ ազգերի երկեր, այլ նաեւ իրենց արմենական հանճարի պոռթկումներով արարեցին հայոց «Ոսկեղնիկ» լեզուով հրաշալի երկեր: Եղիշէի «Վարդանի ու նրա պատերազմի մասին» արձակ բանաստեղծական երկը, Եզնիկի «Եղծ Ադանդոցը», Քրիստոնէական հաւատքի փիլիսոփայութեան ճշմարտութեան իմաստաւորումը, Կորիւնի «Վարք Մաշտոցի» իր երանելի Մեսրոպ վարդապետի հանճարի պոռթկումի փառաբանումը: Հապա Մովսէս Խորենացիի «Հայոց Պատմութիւն» մատենան՝ իր քաջ ազգի խոհունակութեան, հայոց աշխարհում չիշատակութեան արժանի քաջ գործերի մասին, իր ազգի մասին, որպէս վեհագոյնը հիւսիսային ժողովուրդների: Ղազար Փարպեցի, «Հայոց Պատմութիւն», Թուղթ Վահան Մամիկոնեանի», որը Վահան Մամիկոնեանի խնդրանքով գրուած հայոց աշխարհի պատմութեան դրուագներն են՝ սկսած հայոց աշխարհը երկու տէրութիւնների միջեւ բաժանման ժամանակներից մինչեւ Վահան Մամիկոնեանի մարգալտութեան շրջանը: Թարգմանչաց գործունէութեան ժամանակահատուածը համարուեց հայոց մշակոյթի «Ոսկեղար»:

Հայոց մտքի հայկազուն հանճարներից՝ Հրաչեայ Աճառեան, իր «Արմատական Բառարան»ով հինգ հարիւր լեզուների հետ իր «Հայոց Լեզուի Համեմատական Քերականութիւն» անգլոգական բացառիկ աշխատութիւնով աշխարհին աւետեց հայոց լեզուի «Հնդեւրոպական Մայր Լեզուի» ընտանիքին պատկանելը: Նա պատգամեց աշխարհին հայերէն լեզուի պատմութեան ընթացքը, գրաբար լեզուի հիմքերուն վրայ նրա կառուցուածքը: Նա հաստատեց որ հայոց լեզուի քերականութիւնը, ուղղագրութիւնը սկզբնաւորուած են հայոց «Գերագանց Դասագիրքին» Աստուածաշունչ Մատենանէն: Այնտեղ էր, որ հայոց բերանացի գրաբար հայերէն լեզուն, գրաւոր եղաւ: Այդ մատենի քերականական, բառակազմութեան, ուղղագրութեան կատարել կառուցը արարեցին Սահակ կաթողիկոս, Մեսրոպ Մաշտոց եւ նրա ուսուցանած աշակերտները՝ թարգմանիչ վարդապետները:

Տասնվեցերորդ դարու «Վերածնունդի Շրջան»ից յետոյ, հայերէն լեզուն երկու ուղղութիւններով է ընթացել: Արեւելահայերէնը արմատացել է Թիֆլիսի եւ արեւելեան Հայաստանի մէջ, իսկ արեւմտահայերէնը գարգացել է Կոնստանդնուպոլսոյ եւ հայկական սփիւռքի մէջ: Երկու շրջանների էլ հայերէն լեզուն հաւատարիմ էր մնացել «Աստուածաշունչ» հայերէն գրաւոր լեզուի կառուցին՝ քերականութեանը, բառամթերքին եւ դասական ուղղագրութեանը: Ո՞վ զարմանալի, հայերի երկու հատուածներն էլ 1500 տարիներ հայերէն գրեցին այնպէս, ինչպէս գրել էին Սահակն ու Մեսրոպը եւ թարգմանիչ վարդապետները: Նրանք շատ նրբահիւս եղանակով կարողացել էին հայոց «Աստուածահրաշ» մտքից արտաբերուած իւրաքանչիւր նրբագոյն հնչիւնին սահմանել Մեսրոպի երկնած մի առանձին նշանագիր՝ հայերէն դասական ուղղագրութիւն եղեւ այն:

**ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻՆ
ԱԼԲԵՐՏ ԳՐՔԱՇԱՐԵԱՆ**

Խոր գիշերների փակ դռներից
Մեր, Ահա՛, մի հսկայ օրերով անցուն,
Պեղում է մտքի խորքերը
անհուն,
Թէ, ինչպէս գտնել մեր
հրակայուն
«Այբ» ու «Բեմ»ները պահուած
երկնքում:

Որ միշտ հայ լեզուն հայատառ
գրի,
«Ազգ» ու «Հայրենիք»
հաւատք, յոյս ու սէր»
Եւ նրանցով միշտ թող յաւերժ
փայլի,
Մեր լուսաւորչի կանթերը լոյսի:

Եւ մեր հայրենի ժայռերի պէս
կուռ,
Լինեն անսահման, հզօր
հսկաներ,
Բերդեր ու վահան, սուրեր
աննկուն
Ինչպէս մեր նախնիք եղել են
դարեր:

Եւ այսպէս անվերջ, մտքեր ու
մտքեր,
Հասնելու մինչեւ այն բարձր
կետին,
Ուր Աստուածային գիր ու
գրիչներ,
Մեր ազգ ու լեզուին պիտի
լինէին:

Եւ հիմա արդէն աշխարհն
հայոց,
Քո իսկ տառերով այդ կարդում
է քեզ,
Ինչպէս լոյս-գուլարթ գրքերը
սրբոց,
Խօսքն Աստոյ եւ առաքելոց:

Քեզ, ով վարդապետ ու մեծ
ուսուցիչ,
Քեզ, իմաստութեանց
բարձրագոյն դպրոց,
Դու մեր անխափան խօսք,
թուղթ ու գրիչ,
Դու, լուսաճաճանչ անուն
Սուրբ Մաշտոց:

ՄԱԾՈՒՄ, ՄԱԾՈՒՄ, ԼԱՒ ՄԱԾՈՒՄ

Մարտնակուած էջ 13-էն

մասին...

- Վերժին ջան, ուզում էի անակնկալ անել: Այդ դրամը ես պահել եմ ձեռքումս վառելիք գնելու համար, բայց մոռացել եմ թէ ուր եմ դրել: Գրադարանում է, դա չիշում եմ:

- Բա դրամը քեզ որտեղից, չէ՞ որ դու չես աշխատում:

- Չեմ աշխատում հա՛, յետո՞յ ինչ, որ պետական հիմնարկում չեմ աշխատում, բայց ես տանն եմ աշխատում:

- Այդպէս է Յակոբ ջան, մի նեղանայ, դու օրը քսանչորս ժամ ես աշխատում, բայց փողը, փողը քեզ ո՞րտեղից:

- «Էջմիածին» ամսագրում տպուած յօդուածի հոնորարն էր, որ պահեցի: Եթէ քեզ տալի՛ միեւնոյնն է, պիտի ծախսուէր գնար: Եօթ հարիւր ուրբի է, եօթ հարիւր ուրբի: Եթէ այսօր-վաղը չգտնեն, ստիպուած պիտի լինենք մի երկու օր յետոյ մէկը տասի փոխարաբեութեամբ փոխանակել:

- Յակոբ ջան դո՛ւ պիտի

գտնես, դո՛ւ, չիշի՛ր, թէ որտեղ ես դրել, հօ մենք էս հարիւրաւոր գրքերը չե՞նք թերթատելու:

... Եկաւ դրամափոխութեան օրը: Մեր տան մէջ լարուած իրավիճակ է: Բոլորս անհանգիստ ենք: Քիչ օրեր էին մնացել դրամափոխութեան աւարտին եւ մենք դեռ չէինք գտել հայրիկիս պահած դրամը:

Որտեղից որտեղ, սովորութեանս համաձայն, բարձրացայ գրադարանի դարակների ամենավերին շարքից մի գեղատեսիլ ամսագիր վերցնելու: Յանկարծ, ամենավերելում, առաստաղի տակ, աչքս ընկաւ մի պահածոյատուփ: Վերցնում եմ տուփը եւ բաց անում, ի՞նչ եմ տեսնում՝ մէջը լիքը փող...

- Պապա՛, մամա՛, գտա՛յ փողը, գտա՛յ...

Մնացեալը պարզ է: Մայրիկս մի ծանօթ պաշտօնեայի հետ նոյն օրն իսկ վազում է կայարան եւ մեծ դժուարութեամբ կարողանում է առանց հերթի գնել երկու թոն ԱՆՏՐԱՅԻՏ ածուխ:

Չմեռուայ ահաւոր ցուրտն այլ լեւս մեզ համար սարսափելի չէ...:

ՄԱՍԻՍ **ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 for USA

* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

ԿԵՆՍԱՆԻԼԹԵՐ VITAMINS` ԵՒ ՕԼԻԿՕ ԷԼԵՄԵՆԹՆԵՐ

Կենսանիւթերը մարդու ընդունած սնունդի մէջ կը գտնուին չնչին քանակով, սակայն սնունդին արժէքը կապուած է իր պարունակած կենսանիւթերու առկայութեամբ: Անոնցմէ իւրաքանչիւրը ունի իր յատուկ նշանակութիւնը օրկանիզմի համար: Սակայն անընդունելի է սնունդի փոխարէն ընդունելի կենսանիւթեր: Հարուստ սնունդի կարիքը ունին երեխաները, մեծահասակները, յղի կանայք: Կենսանիւթերը մարմնի հիւստածքներու կազմութեան համար հիմք չեն հանդիսանար, ոչ ալ կենսութի աղբիւր, սակայն շատ անհրաժեշտ են առողջութեան, նոյնիսկ կեանքի պահպանման համար:

Անոնց պակասը կ'առաջանայ միատեսակ եւ անորակ սնունդ ընդունելէ: Ճիշդ սնուիլ չի նշանակեր, որ կը ստանանք այն բոլոր կենսանիւթերը, որոնք կը պարունակեն սնունդամթերքները ճաշի պատրաստման ձեւը, անոր պահպանումը շատ դիւրութեամբ կը քայքայեն սնունդի լաւագոյն արժէքները: Յաւելեալ վիթամիններ պէտք է ընդունել երբ այն նշանակուած է բժշկին կողմէ: Անոնց օգտագործման ժամանակ պէտք է խուսափել ալքոհոլային խմիչքներու գործածութենէն: Կենսանիւթերը կը թուլացնեն անթիպայոթիքներու վնասակար ազդեցութիւնները, նոյնիսկ կրնան բարձրացնել անոնց դրական ազդեցութիւնը: Նախընտրելի է ընդունել միեւնոյն ժամերուն, առատ ջուրով, երկար գործողութեան ատեն 1-2 օր երբեմն դադար առնելով:

Vitamin A շատ կը պարունակեն ձկան իւղը, կովու լեարդը, ստեպղինը, անուշ գետնախնձորը, շոմինը, ծիրանի չիրը, պրոքուրին, հաւկիթի դեղնուցը:

Vitamin B կը պարունակեն լեարդը, կովու միսը, հաւկիթը կաթնամթերքները, բանջարեղէնները:

Vitamin D կը պարունակեն կարագը, հաւկիթի դեղնուցը, կենդանիներու լեարդը եւ ձկան իւղը:

Vitamin E սոյա , հաւկիթի դեղնուց, կարագ, ընդեղէններ, ընկոյզ, կանաչ տերեւներով բանջարեղէններ:

Vitamin K կաղամբը, պրոքուրին, բողկ, հազար:

Vitamin C սիթրուսային պտուղներ, թարմ բանջարեղէններ օրինակ լոլիկ, կաղամբ, կանաչ պղպեղ, գեանախնձոր, ծաղկակաղամբ, ելակ: Մէկ հատ ծխախոտը կը քայքայէ 25-100 մկ. vit. C:

ՈՒՐ ԳՏՆԵԼ ԿԱՐԵՒՈՐ ՕԼԻԿՕ-ԷԼԵՄԵՆԹՆԵՐԸ

Կենսանիւթերը կարեւոր են սակայն անբաւարար առանց հանքային օլիկո-էլէմէնթներու: Յայտնի են 18 տեսակ օլիկո-էլէմէնթներ, որոնք անհրաժեշտ են մարմնի բնական գործունէութեան համար, կարեւորներն են.

ՔԱԼՍԻՈՒՄ կը ստանանք կաթնեղէններէն, արեւածաղիկի սերմէն, չոր լուբիայէն, պրոքուրին: Քալսիումը շատ կ'արտադրուի քրտինքին հետ: Շատ քրտնոզներուն յաւելեալ քալսիումը անհրաժեշտ է:

ԱՅՈՏԻՆ Շատ կը պարունակեն ձկնեղէնները, հաւկիթը, մսեղէնները, սոյան, սոխը, կանաչ լուբիան:

ԵՐԿԱԹ Ձուկի, ընդեղէններու, խոզի լեարդի, կովու երիկամի, հաւկիթի դեղնուցի, դեղձի, թուզի եւ նուշի մէջ:

ՄԱԿՆԻԶԻՈՒՄ Հացահատիկներու, չոր միրգերու, ընդեղէններու, քաքաղի, սոյայի մէջ:

ՍԵԼԵՆԻՈՒՄ կը պարունակէ ծովային ուտելիքները, երիկամը, լեարդը, ուղեղը, թունա ձուկը, լոլիկը, պրոքուրին:

ՉԻՆԿ կը պարունակէ կարմիր եւ ճերմակ միսը, հացահատիկները, սունկը, դդմի կոտոր, մուխարտը, ծովային կենդանիները:

ՈՐՆ Է ԱԲԵԼԻ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ` ԹԵՅԸ ԹԵ ՍՈՒՐՃԸ

Պատասխանը մէկն է երկուքն ալ լաւն են իւրովի

ՍՈՒՐՃԸ- Սուրճի պտուղը ծառէն կը հաւաքեն միայն ձեռքով: Բովելէ ետք ան կ'ունենայ այն հրաշալի համն ու հոտը, որ գինք գայթակղիչ կը դարձնէ: Աղացած սուրճը մէկ շաբաթէն աւելի նախընտրելի չէ պահել, քանի որ ամէն անցնող օր կ'իջեցնէ բովուած սուրճի որակը: Իր առողջացնող յատկութեան համար սուրճը պարտական է իր պարունակած քաֆէինին, իսկ թրիկոններն կոչուող նիւթը անոր կուտայ անկրկնելի համ եւ բուրմունք: Անոր պարունակած 30 տեսակի օրինական թթուները կը նպաստեն մարսողութեան: Մարդկութեան կողմէ սուրճը օգտագործուած է անլիչելի ժամանակներէ: Անոր սիւթեմատիկ բաց չափաւոր գործածումը անվնաս է: Չարաշահումը վնասակար է արեան գերճնշում եւ սրտի հիւանդութիւններ ունեցողներուն: Յղի կիները պէտք է խուսափին սուրճ խմելէ, իսկ քնանալէ առաջ խմած սուրճը անքնութեան պատճառ կրնայ դառնալ: Սրճեփի մէջ մնացած սուրճի նստուածքը շաքարի հետ միասին հիւանալի պարարտանիւթ է սենեկային բոյ-

սերու համար:

ԹԵՅԸ- Այս հաճելի ըմպելիքը կը պարունակէ 130 տեսակի քիմիական նիւթեր եւ գրեթէ բոլոր կենսանիւթերը: Մէկ թոն չոր թէյ կը ստանան 4 թոն հիւթալի տերեւներէ: Չինական առածը կ'ըսէ «ինչո՞ւ փնտուել երկարակեցութեան գաղտնիքը, եթէ կայ թէյը»: Ան կը նպաստէ մարմինէն թոյներու հեռացման, որոնք կրնան պատճառ հանդիսանալ քաղցկեղի առաջացման: Թէյը կ'արգիլէ երկաթի ներծծումը եւ այդ պատճառով նախընտրելի է թէյ չխմել երկաթով հարուստ ուտելիքներու հետ: Կանաչ թէյը, այսօր կը նկատուի հրաշք բոյս մը: Ան կը քաղեն նոյն թուփէն, սակայն կը մշակուի այլ մեթոտներով: Ան շատ հարուստ է «ֆլուոր» կոչուող նիւթով, որ կը գործնէ ակոսները: Կը նպաստէ ճարպերու քայքայման, կ'արագացնէ ջերմութի սպառումը: Կանաչ թէյը կը նպաստէ ասթմայի բուժմանը, կ'արգիլէ արեան թարձարացումը, կ'իջեցնէ քոլեսթերոլի քանակը, կը նուազեցնէ քաղցքեղի վտանգը, կ'օգնէ կեղրոնացման լաւացնելու ուղեղի արեան շրջանառութիւնը: Սեւ թէյի մէջ թանիւնի

«ԵԹԷ ՄԵՆՔ ՆԵՐՍՈՒՄ ՀԶՕՐ ԵՆՔ, ԾՆՇՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՏ ՀԱՆԳԻՍ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԴԻՄԱԿԱՅԵԼ»

Շարունակուած էջ 5-էն

«Օրէնսդիր մարմինը՝ օրէնսդիրնե-րին» կարգախօսը:

-Իշխանութիւնը, Սերժ Սարգսեանի գլխաւորութեամբ, որոշակի խոստումներ է տուել եւրոպական կառույցներին, որ Հայաստանում բարեփոխումներ են լինելու, եւ եթէ նոյնիսկ մէկ տարի առաջ որեւէ եւրոպացի պաշտօնեայ չէր խօսում եւրամիութեանը Հայաստանի անդամակցութեան հաւանականութեան մասին, այժմ բարձրաստիճան պաշտօնեաներն են ասում, որ Հայաստանը կարող է ԵՄ անդամ լինել:

-Հայաստանը 10 տարի Եւրախորհրդի անդամ է եւ մինչեւ հիմա մոնիթորինգի տակ է, ի՞նչ Եւրամիութեան մասին է խօսքը:

-Դուք հերթական անգամ հաստատում էք, որ միջազգային գործընկերները բարձր պրոֆեսիոնալիզմ ունեն, եւ հայկական ճարպիկութիւնն Արեւմուտքում չի անցնում, կան պետութիւններ, որոնք ԵՄ-ին անդամակցելուց չետոյ կարճ ժամանակ անց մոնիթորինգից դուրս են եկել: Եթէ դու քո երկրում ունեն հասարակութիւն, որը բարեփոխումներ է պահանջում, եւ ունեն իշխանութիւն, որն այդ բարեփոխումներն իրականացնում է, կարճ ժամանակում ոչ միայն մոնիթորինգից դուրս կը գաս, այլեւ առաջ կը գնաս: Շտեֆան Ֆիլչէն ասաց՝ որքան բարեփոխում անէք, այնքան ֆինանս կը ստանաք: Իսկ ֆինանսներն առաջ գնալու համար նախատեսուած գումարներն են, որի արդիւնքում քո կառավարման համակարգերը համապատասխանեցում են եւրոպական չափանիշներին, խնդիրներ էլ, բնականաբար, չեն մնում:

-Իսկ ես համաձայն չեմ: Համաշխարհային բանկը բազում ռեֆորմներ է պարտադրել Հայաստանին, Գնեմ միայն կրթական համակարգի օպտիմալացումը, որոնք աւերածութիւններ են գործել, ֆինանսներն աւարտուել են, խնդիրները մնացել: Միշտ չէ, որ միջազգային կառույցների առաջարկած բարեփոխումները բխում են Հայաստանի շահերից: Նրանք ունեն ընդհանուր մոդելներ, որոնք իրենց պարագայում գործել են, որոնք մեխանիկորէն փորձում են տեղափոխել այլ երկրներ, որտեղ այդ մոդելներն ընդամենը քանդում են համակարգը:

-Որեւէ մոդել չի կարող աշխատել կառավարման այս համակարգի պայմաններում, խնդիրը մոդելը չէ: Կառավարման համակարգն իրական բարեփոխման խնդիր չի դրել, միակ խնդիրը եղել է գումարների իւրացումը, ինչը եւս հրաշալիորէն լուծուել է:

կորուստը մշակման ընթացքին կը կազմէ 50 տոկոս, իսկ կանաչ թէյինը միայն 2-3 տոկոս: Ան հիւանալիորէն կը յազեցնէ ծաւալը: Մէկ գաւաթ առանց շաքարի թէյը ունի 2 ջերմութ եւ կը պարունակէ 30-40 մկ քաֆէին: Մէկ բաժակ կիտրոնով թէյը կը թեթեւցնէ մտաւոր եւ ֆիզիքական յոգնածութիւնը: Թէյի գոյնը գոյն կ'ըլլայ, եթէ թէյնիկին մէջ չոր թէյին

չի-ն Հայաստանի հետ կապուած որեւէ խնդիր չունի, որ գումար տա ու հետեւի, թէ ինչ համակարգ է ստեղծուած: ԵՄ-ի պարագայում այլ է, ԵՄ-ն շահագրգռուած է, որ Հայաստանը դառնայ իր կարեւոր գործընկերներից մէկը եւ համապատասխանի իր չափանիշներին: Հայաստանը որոշակիորէն յայտնուել է ԵՄ հետաքրքրութիւնների շրջանակում:

-Դեռաքրքրութիւնների շրջանակում յայտնուելը կարող է իրավիճակ փոխել Լեռնային Ղարաբաղի հարցում:

-Ոչ մի դէպքում: Լեռնային Ղարաբաղի խնդիրը լուծուել է, մնում է իրաւական կարգապահական տալ, ինչը Հայաստանի ժողովրդավարացման պայմաններում շատ հեշտ է լինելու:

-Չե՞ք կարծում, որ Ֆրանսիայի Գախազաիի Հայաստան այցով աւարտուել ԼՂ հարցի լուծման գործընթացում ռուսական փուլը, եւ սկսուել եւրոպականը:

-ԼՂ հարցի լուծման ընթացքում տարբեր փուլեր կարող են լինել, բայց էական ազդեցութիւն չեն թողնի, որովհետեւ ԼՂ խնդիրը լուծուել է այնպէս, ինչպէս ցանկացել է ԼՂ ժողովուրդը: Մնացածը դետալներ են: Մենք վերջապէս պէտք է ինքներս հասկանանք, որ խնդիրը լուծուած է, եւ Հայաստանի ժողովրդավարացման պայմաններում ԼՂ-ի միջազգային ճանաչումը չի ուշանայ: Մեր իշխանութիւնների դէմ ճնշման միջոցը, երբ ստիպուած են զիջումներ անել, իրենց լեզուի մոլորութիւնն է: Նոյնիսկ գերտէրութիւնները տարածաշրջանում ստատուս քվոյի փոփոխութիւն չեն ուզում: Որ կոնֆլիկտը ռազմական լուծում չի ունենալու, քանիցս յայտարարել են ԵԱՀԿ ՄՍ համաձայնագրերը: Նոյնն ասաց Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին Հայաստանում: Մենք ոչ թէ պէտք է մտածենք՝ ինչպէս լուծել Ղարաբաղի հարցը, այլ ինչպէս ժողովրդավարացնել երկիրը եւ իրականացնել ԼՂ ճանաչումը:

-Դուք արտաքին քաղաքականութեան շեշտադրումն առաջարկում էք տեղափոխել ներքին քաղաքականութեան վրայ:

-Եթէ մենք ներսում հզօր ենք, ճնշումներին շատ հանգիստ կարող ենք դիմակայել: 88-ին էլ ճնշումներ եղել են, բայց եղել է հաւատ, եղել է փոփոխութիւնների յոյս, եւ կարողացել ենք դիմակայել, հիմա պիտի կարողանանք վերականգնել վստահութիւնը, նորմալացնել կառավարման համակարգը, եւ հայ ժողովուրդը, որ աշխատող ժողովուրդ է, ինքը կ'անի մնացածը: **Զրուցեց Անահիտ ԱԴԱՄԵԱՆԸ**

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ՝ ՄԿՐԱՏՈՒԱԾ ԿԵԱՆՔ ՄԸ

Շարունակում էք 6-էն

չափազանցություն մէջ: Շատ շանցած թերթի մը մէջ երեւցաւ գրախօսական մը, որու «տիպար քաղաքացի» հեղինակը Սեւակը կը քննադատէր անոր մշուշապատ, անորոշ եւ առեղծուածաչին մտորումներուն համար, որոնք ոչինչ կրնային տալ խորհրդաչին քաղաքացիին: Կարելի է գարմանալ միայն այս «պարկեշտ» գրադատի խօսքերուն վրայ, որովհետեւ ժողովածուի ամենամեծ արժանիքը բանաստեղծական խօսքի յատկութիւնը եւ անկեղծութիւնն էր, նոյնիսկ՝ անսովոր յանդուգն անկեղծութիւնը: Ժողովածուէն յիշեմ քանի մը բանաստեղծութիւններ միայն. «Հայաստան», «Որդուս», «Մարդ էլ կայ, մարդ էլ», «Մօր ձեռքերը», «Անկեղծ ասած»՝ չեղարեմ շարքը: Կարծեմ, ոչ մէկ գրադատի միջնորդութիւն պէտք է նման հրաշալի քերթուածներ ընթերցողի միտքին ու սրտին հասցնելու համար: Սեւակ կորովի շունչ մը կը բերէ այս գործերով, կը հարթէ կարելի եւ անկարելի սահմանները, պատրաստ է նոյնիսկ ողջակիզման, միայն թէ յաղթանակէ մեծ ճշմարտութիւնը:

Յանուն գալիք վառ խարոյկի ես պատրաստ եմ այսօր ծխալ, Յանուն վաղուայ ճշմարտութեան, թող որ այսօր լինեմ սխալ:

Սեւակի մտակովեան կեանքի տարիները եղան չափազանց բեղուն եւ արգասաբեր: Անշուշտ, հոս կարեւոր եւ բարերար ազդեցութիւն ունեցած են միջավայրը, հոգեկան կեանքի արտաքնապէս բնականոն ընթացքը եւ, ի վերջոյ, սիրած կնոջ ներկայութիւնը: Ետեւ ետեւի կը գրուին «Ուշացած իմ սէր», «Նահանջ երգով» ու «Երգ երգոց» գործերը: Կը խմորուի եւ կը հասունանայ «Անլուելի գանգակատուն»-ը գրելու մարմաշը: Այս շրջանի մասին շատ պատկերաւոր սրտայայտուած է ինքը՝ բանաստեղծը. «Ձգում եմ որպէս Աստուծոյ քարտուղար - նա թելադրում է, ես գրում եմ»:

Օրհնեալ այս շրջանին կը գրուի նաեւ Սեւակի «Մարդը արի մէջ» շարքը, որ հրատարակուեցաւ 1963-ին, բայց իր ամբողջութեան մէջ ստեղծուած էր տակաւին 1956-1959 թուականներուն: Քանի մը բանաստեղծութիւններ նախապէս հրատարակուած էին «Նորից քեզ հետ» գրքին մէջ, բայց ինչպէս Սեւակ կը վկայէ, ամենաթոյլ գրուած քները հաճոյացած էին գրաքննիչներու բթացած քիմքին:

«Մարդը արի մէջ» ժողովածուն լոյս աշխարհ եկաւ «Անլուելի»-ի աննախընթաց յաջողութեան հետք: Սեւակ ներքուստ վախ ունէր, որ «Անլուելի»-ի յաջողութիւնը նախ պայմանաւորուած է անոր ազգային բովանդակութեամբ: Բանաստեղծին ներքին ձայնը կը յուշէր, որ «Անլուելի»-էն ետք պէտք է ընթերցողին տալ որակապէս նոր բան մը:

«Մարդը արի մէջ» ժողովածուն ընթերցողի մէջ նախ տարակուսանք կ'առաջացնէ, տարակուսանք մը, որ կ'առաջանայ անսովորի հետ առաջին հանդիպումէն, ապա այն կը վերածուի անխառն հիացմունքի:

Անցնող 20-րդ դարն է պտղաւորողը «Մարդը արի մէջ» ժողովածուն, բարդ, հակասական, հաշուիչ մեքենաները աստուածացնող դարը, որ ելած է նոյնիսկ հաշուելու եւ թուապրելու մարդոց զգացումները,

հոգիի թրթիռները: Իսկ ո՞ւր է մարդը այս ամէնուն մէջ: Սեւակ կը պաշտէ մարդը, 20-րդ դարու մարդը, եւ այդ պաշտամունքն է, որ կը մղէ գայն մարդուն յիշեցնել իր մարդկայնութիւնը:

«20-րդ դարու մարդը աւելի բարդ եւ հարուստ հոգեկան աշխարհ ունի, քան Տանըմարքայի յայտնի իշխանը», աւելի մը գրած է Սեւակ: Եւ բանաստեղծը կը պեղէ, իր իսկ խօսքերով՝ այդ մարդուն «հոգեկան ներանձաւային լաբիրինթոսը»: Այդ պեղումները ծնունդ կու տան անսովոր դատումներու, հակասական գուգորդումներու, սեփական «ես»-ի տարօրինակ անձնաւորումներու, եւ ոչ բանաստեղծական թուացող երեւոյթներու սքանչելի բանաստեղծականացման: Ժողովածուն կատարեալ յաղթանակ կ'ապահովէ Սեւակին: Սեւակ ժողովուրդի պաշտելի բանաստեղծն է: Բայց ան գիտովցած չէ այս յաղթանակէն: «Անլուելի»-ի հրատարակումով արդէն, 1959-ին ան ճաշակած էր աննախընթաց յաղթանակի համը. հայրենիքէն լուելեայն աքսորուած որդին յաղթական դափնիներով վերադարձած էր հայրենիք:

Այսպէս, 1959-ին կ'աւարտի Սեւակի կեանքի երկրորդ՝ մոսկովեան շրջանը եւ կը սկսի երրորդ՝ երեւանեան շրջանը:

«Անլուելի գանգակատունը» կոթողային գործ է թէ իբրեւ յղացում, թէ իբրեւ կառույց, եւ թէ իբրեւ գեղարուեստական որակ: Իր ամբողջութեան մէջ բարդ կառույց ունեցող վիպերգը ճարտարապետական մանրակերտ մը կը ներկայացնէ, ուր դէպքերը կը ծաւալին սեմֆոնիք երաժշտութեան կառոյթով: Իր ներքին ուժակնութեան համբ, բառաձեւերու նորովի գուգորդումներով, ժողովուրդանհատ-հոգեւոր մշակոյթ եռանդամ միասնութեան հզօր պատկերացումով «Անլուելի գանգակատուն»-ը բազմադարեան պատմութիւն ունեցող հայ գրականութեան փառահեղ մէկ էջն է:

Ետեւ-ետեւի կը գրուին «Եւ այդ մի Մաշտոց անուն», «Եռաձայն պատարագ» գործերը, «Մայնաթ Նովա» թեկնածուական ատենախօսութիւնը իր աւարտին կը հասնի, որու համար Սեւակին մէկ անգամէն կը շնորհուի բանասիրական գիտութիւններու դոկտորի գիտական աստիճան: Հոս տեղին է հերքել այն թիւր կարծիքը, թէ Սեւակ Հայաստանի պաշտօնական շրջանակներուն մէջ չունէր այն ժողովրդակալութիւնը, ինչ որ կը վայելէր պարզ ժողովուրդին մէջ: 1961-էն 1971 թուականներուն Սեւակ առաջնորդողի դերի մէջ է ի պաշտօնէ. ան յրեւելեան հանդիսութիւններու բանախօս է, արտասահման մեկնող պատուիրակութիւններու անդամ, Գրողներու միութեան քարտուղար, Հայաստանի եւ ԽՍՀՄ Գերագոյն սովետի պատգամաւոր, ԽՍՀՄ գրողներու միութեան վարչութեան անդամ:

Սեւակի ստեղծագործական եւ քաղաքացիական յաղթանակները բացատրել միայն իր հզօր ստղանդով, մեղանշում պիտի ըլլար պատմութեան դէմ: Պէտք չէ մոռնալ, որ 1955-1960-ական տարիները գաղափարական-մշակութային ձնհալի տարիներ էին Խ. Միութեան մէջ: Անա թէ ինչու նախկին «աչքի փուշ» Սեւակ կը դառնայ «աչքի լոյս», կը պակուրի դափնիներով եւ նոյնիսկ կը «հալածուի» փառքի

կողմէն: Բայց փառքը, պատուանշանները, մեծարանքները միայն արտաքին փայլքն են: Իրակալութեան մէջ Սեւակ յոգնած եւ տանջահար է. նոյնիսկ կ'ապրի ստեղծագործական ամլութեան վախը: Նախ կար հարցերու հարցը. 1969-էն ի վեր «Եղիցի լոյս» ժողովածուն կալանքի տակ էր: Տպագրուած քսանհինգ հազար օրինակներէն արդէն բազմահազար օրինակներ գարտուղի ճամբաներով հասած էին ընթերցողին, բայց գիրքին ճակատագիրը կը մնար անորոշ: Ձնհալն ալ չէր օգնած: Պապէն աւելի պապական հայերը նորէն մեկան կը հոսեցնեն, »Եղիցի«-ի տողացի ուռեւէն թարգմանութիւնները բարեյաջող կը հասնին Մոսկուա, առ որ անկ է: Պարոյրին նեարդերը տեղի կու տան: Կայ ականատեսի վկայութիւն, թէ ինչպէս Սեւակ պատուուած վերնաշապիկով դուրս կ'ելլէ Կենտկոմի շէնքէն՝ անօրինակ չիշոցներ արձակելով բարձրաստիճան պաշտօնեաներէն մէկուն հասցէին: Ան անձամբ գացած էր Կենտկոմ՝ բանտարկուած գիրքին ճակատագիրը պարզելու, բայց օրէնքի պաշտպաններու օգնութեամբ «քաղաքավարօրէն» դուրս դրուած էր շէնքէն:

Կը մնար աննշան յոյս մը: 1971 թուական, Յունիս 3, Հայաստանի գրողներու միութեան համագումար: Սեւակ հինգ տարի վարած է նոյն միութեան վարչութեան քարտուղարի պաշտօնը: Որոշած է հրաժարիլ: Կ'ուզէր հաւատալ, որ գրչակից ընկերները համագումարին կ'արծարծեն «Եղիցի լոյս»-ի կալանման հարցը, բացատրութիւններ կը պահանջէն պատկան մարմիններէն: Չուր յոյսեր: Ոչ մէկ խօսք այդ մասին: Կարծես այդպիսի գիրք գոյութիւն իսկ չունէր: Սեւակ կը հրաժարի պաշտօնէն, կտրականապէս կը մերժէ իբրեւ պատգամաւոր մեկնիլ Մոսկուա՝ պատճառաբանելով, թէ ֆիզիքապէս ի վիճակի պիտի չըլլայ մեկնելու: Ընդամէնը երկու շաբաթ մնացած էր մինչեւ Յունիսի 17-ը, մինչեւ իր եւ Նելլիին եղբրական վախճանը:

Անաչառ ժամանակը վստահաբար օր մը Սեւակի միլիոնաւոր ժառանգորդներուն պիտի ըսէ, թէ ինչ պատահեցաւ ամառնային այդ օրը՝ Յունիսի 17-ին: Այսօր յարմար չեմ գտներ խօսելու այդ մասին, նաեւ ինքզինքիս իրաւունք չեմ վերապահեր կարծիք յայտնելու, կամ եզրակացութիւն ընելու: Միայն կրնամ ըսել, որ յունիսեան այդ օրը, իբրեւ նորաւարտ դպրոցական ես ալ դառնօրէն լացի հայերէնիս ուսուցչուհիի կուրծքին փարուած, որովհետեւ առաջին անգամ ապրեցայ հարգատեւ եւ պաշտելի մարդու կորուստին դառնութիւնը: Պատմութեան այս էջն ալ դժբախտաբար, անշրջելի է:

Սեւակի անժամանակ մահով հայ գրականութիւնը կորսնցուց մեծ տեսանող մը, որ արդէն ճաշակած էր յայտնութեան հաճոյքը, եւ «Եղիցի լոյսով» կ'աւետէր իբրեւ արարող իր երկրորդ ծնունդի մասին, ծնունդ մը, որու մկրտութիւնը այդպէս ալ չկայացաւ:

Սեւակի ստեղծագործական կեանքին մէջ կատարուած բեկումը զգալի էր տակաւին «Երգ երգոց»

վիպերգէն, գրուած 1957-1960-ականներու միջեւ: Որքան ալ օրին Սեւակ կը ջանար իր քաջարանցի երկրպագու ընթերցողին պատասխան նամակով մը համոզել, որ պոէմի հերոսուհին աստուածաշնչային Սուլամիթն է, այսօր մենք արդէն գիտենք, որ կանացի միս ու արիւնով իրական Սուլամիթն գոյութիւն ունէր եւ բաւական մեծ դեր խաղցած էր Սեւակի թէ անձնական, եւ թէ ստեղծագործական կեանքին մէջ: Հարցը սակայն այս չէ: Այս պոէմով եւ յատկապէս »Մարդը արի մէջ« գրքի «Ականջդ բեր ասեմ» շարքով Սեւակ կ'աւետէ յայտնութեան մասին, իր ստեղծագործական նոր դաւանանքին մասին:

Եւ՝ նոր աշխարհ եմ ստեղծում հիմա,

Առայժմ եթէ ոչ ձեզ բոլորիդ, Ապա գոնէ ինձ, միայն ինձ համար, Որպէսզի նախ ես, Եւ հէնց ինձ վրայ Բժշկի նման փորձարկեմ կարգին,

Ու եթէ լինի այս անգամ սարքին՝ Նոր միայն վստահ յաճճեմ ձեզ նաեւ,

Եւ ապրեք այնտեղ դուք մարդավայել:

Միայն ապրեք այնտեղ դուք մարդավայել:

Ահա այս տողերն են, որ կ'աւետեն տառապանք ապրած բանաստեղծին յայտնութիւնը: Այդ տառապանքին փայլուն արտայայտութիւնն է «Եղիցի լոյս»-ը, ուր բանաստեղծին վեցերորդ՝ սովորական մարդուն ոչ յատուկ զգայարանը, հասած է այնպիսի պայծառատեսութեան, որ բանաստեղծը այլեւս կը ճաշակէ յայտնութեան հաճոյքը:

Սեւակ չապրեցաւ այնքան, որ իր ստեղծած նոր աշխարհը տար մարդոց, այլ երազեց միայն, որ օր մը ինք պիտի շնչայ Եղիցի լոյսի պատասխանը՝ Եւ՝ եղեւ լոյս:

Եկէք այսօր մենք շնչանք Պարոյր Սեւակ մեծ հայրերիին քառամասնեայ անմահութեան իբրեւ վկայութիւն՝ Եւ՝ եղեւ լոյս:

Պարոյր Սեւակի գեղարուեստական մտածողութիւնը կարելի է բնորոշել իբրեւ բանաստեղծական սեմֆոնիզմ՝ բանաստեղծական համանուագայնութիւն: Այս բնորոշումը կ'արդարանայ եւ կ'իմաստաւորուի այն նախադրեալով, որ Սեւակի բանաստեղծական ծնունդը մեծապէս պայմանաւորուած էր նախ՝ Նարեկացիի, ապա Կոմիտասի ազդեցութեամբ: Կրելով այս բարերար ազդեցութիւնները, Սեւակ խորապէս զգացած է բանաստեղծական արուեստի եւ երաժշտութեան ներքին սերտ կապը: Անվերջանալի աշխարհի եւ մարդկային բազմաձայն հոգեբանութեան պատկերացումը մղած է Սեւակը դիմելու բանաստեղծութեան մէջ բազմաձայնութեան ստեղծումին. անհամաչափ, իրարու վրայ կուտակուած պատկերներ, գիրար հակասող անմիասեռ երեւոյթներ, որոնք կը զօղուին սեմֆոնիզմի օրէնքներով եւ բանաստեղծի պատկերաւոր մտածողութեամբ:

Սեւակ նորարար էր բառիս ամբողջական իմաստով, նորարար եւ անկրկնելի՝ ինչպէս բոլոր մեծութիւնները:



ՄԱՐԱԶԴ



ԼԻԻՍԻ ԅՈՎԱԿԻՄԵԱՆ
(Ծնեալ 1926, Պէյրուսթ)

Սրտի դառն կիսկիծով կը գոժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր եւ հարազատին՝ ԼԻԻՍԻ ԅՈՎԱԿԻՄԵԱՆի մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 21 Հոկտեմբեր, 2011ին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի 27 Հոկտեմբեր, 2011, կէսօրէ ետք ժամը 1:00ին Հոլիվուտի Ֆօրեմփըր գերեզմանատան մէջ Hollywood Forever Cemetery, 6000 Santa Monica Blvd. Los Angeles, CA, ապա թաղումը նոյն գերեզմանատունը:

Սգակիրներ՝
Գաբրիէլ եւ Մարիա Մոլոյեանը եւ զաւակը Ռուբէն եւ Անահիտ Հարմանտայեան եւ զաւակները Ալէն եւ Ոգոհի Իւնէլ եւ զաւակները Եւ Համայն Ազատայեան, Բաղիկեան, Գասպէր, Պէք ընտանիքներ եւ հարազատներ:

Փոխան ծաղկեպսակի մուրաւորութիւնները կը խնդրուի կատարել նոր Սեբուսթիանոս Մշակութային Միութեան:

ՑԱԿԱԿՑԱԿԱՆ

ԼԻԻՍԻ ԽՇՖԱՃԵԱՆ-ԅՈՎԱԿԻՄԵԱՆի մահուան առթիւ Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը իր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար Վարիչ Մարմնի անդամ ընկեր Գաբրիէլ եւ Մարիա Մոլոյեանի եւ համայն հարազատներուն:

ՑԱԿԱԿՑԱԿԱՆ

ԼԻԻՍԻ ԽՇՖԱՃԵԱՆ-ԅՈՎԱԿԻՄԵԱՆի մահուան առթիւ Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը կը ցաւակցի հանգուցեալի բոլոր հարազատներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Գաբրիէլ եւ Մարիա Մոլոյեանին:

ՑԱԿԱԿՑՈՒԹԻՒՆ

ԼԻԻՍԻ ԽՇՖԱՃԵԱՆ-ԅՈՎԱԿԻՄԵԱՆի մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրական եւ վարչական անձնակազմը իրենց խորացրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի հարազատներուն, յատկապէս «Մասիս» շաբաթաթերթի խմբագրական կազմի անդամ Տէր եւ Տիկ. Գաբրիէլ եւ Մարիա Մոլոյեանին:

ՑԱԿԱԿՑՈՒԹԻՒՆ

ԼԻԻՍԻ ԽՇՖԱՃԵԱՆ-ԅՈՎԱԿԻՄԵԱՆի մահուան տխուր առիթով Սահակեան Լեւոն Մկրտիչեան Գոյէճի Սանուց Միութիւնը իր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն եւ հարազատներուն:

ՑԱԿԱԿՑՈՒԹԻՒՆ

ՏԻՐՈՒՀԻ ԴԱԻԹԵԱՆի մահուան առիթով Տէր եւ Տիկ. Պետրոս եւ Սիրարփի Սէֆէրեան իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի համայն հարազատներուն եւ յատկապէս Ընկ. Պարգեւ Դաւիթեանին:
Առ այդ \$100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ

ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՇԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՇԵՌԱՋԱՅՆԵԼ
(626) 797-7680

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ ՌԻՍԱԻՈՐՆԵՐ

Շարունակուած էջ 7-էն

Չանքերու շնորհիւ սկիզբ առաւ այս ծրագիրը: Այս նախաձեռնութեան շնորհիւ մենք յուսալից ենք որ այսօրը ամենէն աւելի յոյսի օր մըն է, օր մը՝ ապագային նայելու լաւատեսութեամբ: Որպէս Ամերիկայի ուխտաւորներ բախտաւոր ենք որ մասնակից կ'ըլլանք այս պատմական հանդիսութեան եւ կը բաժնենք լաւատեսութեան յոյսը»: Ապա, Սրբազան Հայր «Ս. Վարդան» մրցանակը յանձնեց քաղաքապետ Օսման Պայտէմիրի եւ քաղաքապետ Ապտուլլա Տէմիրպասի: Իսկ Գերշ. Տ. Արամ Արք. Աթէշեան արծաթեայ յուշանուէրներ յանձնեց զոյգ քաղապետներուն եւ Եկեղեցւոյ վերանորոգման ծրագրի ճարտարապետին:

Քաղաքապետ Պայտէմիր եզրափակեց օրուան հանդիսութիւնը շեշտելով. «Այսօրուան առիթը միայն տօնախմբութեան առիթ մը չէ, այլ օր մը՝ մեր ներողութիւնը յայտնելու անցեալի ցաւալի միջադէպերուն համար: Մենք կ'ուզենք որ դուք դարձեալ գաք ոչ որպէս զբօսաշրջիկ, այլ որպէս ձեր տունը վերդարձող անհատներ»:

Կիրակի առաւօտ վերածուած Ս. Կիրակոս Եկեղեցւոյ մէջ պատարագեց եւ քարոզեց Գերշ. Տ. Արամ Արք. Աթէշեան: Իսկ Կոմիտասեան պատարագը երգեցին Ֆէրիթոյի Սրբոց Վարդանանց Եկեղեցւոյ

դպրաց դասի անդամները: Հայ եկեղեցականներու կարգին ներկայ էին նաեւ Ապիտէնի Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Եպիսկոպոսը, Կոնստանդնուպոսոյ Տիեզերական Պատրիարքի ներկայացուցիչը եւ զոյգ քաղաքապետները:

Յաւարտ Ս. Պատարագի հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն կատարուեցաւ հանգուցեալ առաջնորդներու, հոգեւոր հովիւներու, Ս. Խորանի սպասարկողներու եւ Տիգրանակերտի հաւատացեալներու հոգիներու խաղաղութեան համար:

Յաջորդ օրը ծրագրուած էր երթալ վան՝ այցելելու համար Աղթամարի Ս. Խաչ Եկեղեցին, սակայն երկրաշարժի պատճառաւ ջնջուեցաւ այս այցելութիւնը: Ուխտաւորները այցելեցին Մարտինի մօտ Տէրէքի շրջանին մէջ գտնուող եւ 17-րդ դարուն կառուցուած Ս. Գէորգ Եկեղեցին: Անոնք հանդիպեցան Եկեղեցւոյ հոգատարին՝ որ 300 տարուան հնութիւն ունեցող Աստուածաշունչ մը եւ շարակնոց մը կը պահէր եկեղեցւոյ մէջ: Ուխտաւորները դիմաւորուեցան էյուպ Կիւլէնի կողմէ՝ որ հեղինակն է հայկական ցեղասպանութենէն վերապրողի մը կենսագրական գիրքին՝ «Գոհար» խորագիրով: Այս այցելութեան ընթացքին որոշ թիւով տեղացիներ մօտեցան ուխտաւորներուն յայտնելու համար որ իրենք հայկական ծագում ունին:

ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆԻ ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՈՐԲԵԼԵԱՆԸ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐ 30ԻՆ

Շարունակուած էջ 8-էն

Օր»ի խմբագիրը մինչեւ 1990: 1993-98ին եղած է ՀԲԸՄԻ Սան Ֆերնանտո հովիտի մասնաճիւղի վարիչ-քարտուղարը, իսկ 2003ին լոյս ընծայած է քրոնիկագրութիւն մը՝ Լիբանանի քաղաքացիական պատերազմին մասին:

Գեղարուեստական յայտագիրը պատրաստուած է «Լարք» երաժշտական ընկերակցութեան տնօրէն եւ երաժշտական ղեկավար Վաչէ Պարսումեանի կողմէ: Պարսումեան եւ Սաթամեան միասին գործակցելով՝ մեծ յաջողութեամբ բեմ հանեցին Տիգրան Չուխաճեանի երեք օփերէթները՝ «Չուարթ»ը (2003), «Լէպլէպլի»ն (2004) եւ «Չեմիրէ»ն (2008): Պարսումեան պիտի օգտագործէ իր երաժշտանոցի լաւագոյն ուժերը: Գեղարուեստական յայտագիրին մաս պիտի կազմէ նաեւ Գրիգոր Սաթամեանի ասպարէզային նուաճումներու մասին հակիրճ տեսաերիզ մը:

Սրտի խօսքերով հանդէս պիտի գան ՀԲԸՄ «Արտաւազը» թատերախումբի նախկին երկարամեայ ատենապետ Սամուէլ Իլանճեանն ու թատերախումբի այժմու ատենապետ Արա Պապայեան, ինչպէս նաեւ Վաչէ Պարսումեան եւ ՀԲԸՄ «Վահրամ Փափազեան» թատերախումբի նախկին ղեղապետ Նուհի Արփի Սիմոնեան:

Հանդիսութեան կիզակէտը պիտի հանդիսանայ շքանշաններու պարգեւատրումը, որոնց անվերապահօրէն արժանի է օրուան մեծարեալ յոբելէարը:

Պաշտօնական յայտագիրի աւարտին տեղի պիտի ունենայ հիւրասիրութիւն:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

Փասատինայի լաւ շրջանի մէջ,
Washington փողոցի մօտերը 1 սենեակով վարձու տուն
Վարձքը \$900 տոլար
Մանրամասնութեան համար
հեռաձայնել (310) 466-7775



Ճաշկերոյթ
Պարահանդէս
Նուիրում

Հ.Մ.Մ.ի 90 Ամեակին
կազմակերպութեամբ

Հ.Մ.Մ.ի Շրջանային Վարչութեան

Օրուան հանդիսութիւնը պիտի խանդավառէ
յատուկ Լիբանանէն ժամանած, սիրում երգիչ՝

Պերճ Նազգաշեան

Տեղի կ'ունենայ Շաբաթ, Նոյեմբեր 26, 2011
երեկոյեան ժամը 8:30 էն սկսեալ

Deluxe Banquet Hall

Շքեղ սրահէն ներս՝

237 East Olive Avenue, Burbank, CA 91502

Մանրամասնութեան համար հեռաձայնել
(626) 485-6434 (818) 324-057

Մուտքի Նուէր \$ 75.00